

ՏԱՋԱՐ

ԿՐԹՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 5

ԽՐԱՍԳՐԱՊԵՏ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Վ.Ա.ՐԻԶ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՐ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՍ-
ՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՄԻԱՑԱԾ ՔԱԼԵԼ
ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ ՅԻՍՈՒԾԻ ԾՆԵԴԵԱՆ ԱՏԵՆ
ԺԱՄԱՆԱԿԸ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ՓՈԽԱԴԱՐՁԸ (ՔԵՐՈՒՄԸ)
ՀԱՅ ԵՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՄՏՈՒԹԻՒՆԸ
Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ ԿԱՄ ԱՐԵԱԿՈՒՆԵԱՑ ԹԱ-
ԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ
ՔԱՐՈՋԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ

Ե. Ն. Գ.

ՋԱՐՄԱՅԻ ԴԱՀԱՆԱՅ

ՄԵԿՆԵԶ

ԹՐԳՄ. ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

ԿՈՐԻՒՆ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ

ԹՐԳՄ. ԳԱՐԵԳԻՆ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ

ԱՐՏԱԽԱՋԻ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԴՀՆԵ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ

ԹՐԳՄ. ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԳԻՆ 50 փարսյ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պապր Այի հաստի Սեփեքիլեր փողոց Թիւ 27

Գաւառներէ ինքնաբերաբար դիմումներ կը հասնին Վարչութեանս՝ կրօնաթերթիս բաժանորդագրուելու խնդրանք:

Ի պատասխան այս խնդրանքներու կը յայտարարենք թէ՛ այսպիսիներու և թէ՛ ուրիշ բաժանորդ ըլլալ փափաքողներու թէ՛ կրնան դիմել իրենց պատկանած Առաջնորդարաններու կամ Թաղ. Խորհուրդներու և կամ յատկապէս նշանակուած գործակալներու և անոնց միջոցաւ իրենց դիմումը ներկայացնել և ստանալ թերթիրը:

Ի դիւրութիւն կը ծանուցանենք ի ստորեւ տնուները այն առաջնորդներուն և գործակալներուն, որոնց գործակցութիւնը խնդրած ենք թերթիւն ի նպաստ:

ՅՈՒՑԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ "ՏԱՃԱՐ" ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

Ադրիանուպոլիս
Աղեմանդրիս
Ամերիկա
Այնթապ
Ասաբազար
Արմաւ
Բեդեսպուրկ
Գաղաթիս
Գօնիս
Եգիպտոս
Եդեսիս
Եօզրատ
Երզնկա
Եւդոկիս
Զմիւռնիս
Էսէիքեհիւր
Խարբերդ
Կարին
Կեսարիս
Կիրատն
Հալեպ
Մանչեսթր
Մարաւ
Մարզուան

Առաջն. Տեղապահ Տ. Մատթէոս Վրդպ. Ինճէկոմ
Միհրան Էֆ. Թէլեան
Առաջ. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդպ. Գաֆթանեան
Տ. Գարեգին Քնյ. Պօղարեան
Գրիգոր Էֆ. Ակօնայեան
Փոխ-Վանահայր Տ. Մեսրոպ Մ. Վրդպ. Նարոյեան
Տ. Խաչատուր Ա. քնյ. Տօնէլեան
Առաջնորդ Տ. Բարդէն Մ. Վրդպ. Կիւլէսէրեան
Տ. Յովհաննէս Քնյ. Գուլումճեան
Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ. Վրդպ. Աղաւնուհի
Ք. Թիւրաքեան Էֆ.
Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդպ. Դիմաքեան
« Տ. Երուանդ Վրդպ. Փէրտահճեան
Առաջն. Տեղապահ Տ. Արտաւազդ Վրդպ. Գալէնտէրեան
« Փոխանորդ Տ. Յովհաննէս Ա. Քնյ. Մինասեան
Տ. Գալուստ քնյ. Տ. Գալուստեան
« Տեղապահ Տ. Գէորգ Մ. Վրդպ. Ապրանեան
Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վրդպ. Սասունքեան
« Տ. Տրդատ Ս. Եպիսկ. Պալեան
Մաթոս Էֆ. Թոքատեան
Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդպ. Գասպարեան
Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպիսկ. Իւթիւճեան
Տ. Հմայեակ Քնյ. Վարժապետեան
Յակոբ Էֆ. Սրապեան



ԿՐԹՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

«Մի՞նկի տեղ ընդհանրական (universaliste) կրթիք ձևակազմական եւ արտաքին օրինակներու ազդեցութեան տակ կ'ստանայ անգիտակցից եղափոխութեան մը պատշաճ չի եղած: Անկեմ տեղ ան կը ներկայանայ իբրեւ անհասկանալի անհոգ-ծագործութիւն, իբրեւ քաղաքական եւ ազգայնական գործը քանի մը շրջանում հոգի-ներու՝ որոնց մէջ հին աւանդութիւնը, խորին նշանակաւոր մը, կը գտնուի, ու կը ընդլայնուի: Այս եղած է Կոմբու-կիտի դերը Չինաստանի մէջ, Պոստա-լիներ՝ Հնդկաստանի մէջ, Սոկրատիսներ՝ Յունաստանի մէջ, մարգարէներու՝ Իսրայէլի մէջ, Մահաւիտիներ՝ Արաբիոյ մէջ: Բոլորն ալ նախնական կրթիքի վի-տանորոգիչներն են եղած: Այս ձևակազմ-յալներու մէջ չկ'աւանդուած ցեղիկն միջակայն հոգիի մէջ, այլ տեղի կ'ու-

նենայ «Աստուծոյ մարդկութիւն» բնա-պայծառ մտածութեան, անդրադարձ խորհուրդի եւ քաղաքական ներշնչու-մի մէջ:»

Օ. Սապարիէ, Ուրուագիծ կրթի-քի իմաստասիրութեան. էջ 116:

Օ. Բանդ, իր կեանքի երկրորդ շրջանին մէջ ինքզինքը քահանայապետ հռչակեց այն կրօնքին՝ զոր նա հիմ-նեց մարդկութեան պաշտամունքին վը-րայ: Մոնթէիէի արտակարգ իմաս-տասէրին այս դրապաշտիկ հաւատքը, ժիւրի դարու երկրորդ կիսուն ստեղ-ծագործութիւն, իր ինքն մէջ ալ ունե-ցաւ իր հետեւորդները, ո՛չ միայն Եւ-

րոպայի՝ այլ նաև Ասիայի մէջ, բացի սակայն այն արտառոցութիւններէն՝ որոնք Քոնգի կրօնքին հրամանակադրական հրահանգները կը բանաձեւէին այնքան սնոտի մանրամասնութիւններով:

Կրօնքի մը ճշմարտութեան ստուգանիշը իր ընդհանրականութիւնն է, այսինքն այն ուժական (dynamique) զօրութիւնը՝ որուն մէջ կը բովանդակուի կեանքը իր բոլոր երեւոյթներովն ու իրողութիւններովը: Զիկայ աւելի ընդհանրական բան մը քան մարդկութիւնը, զոր հին բարեպաշտութիւնը իրաւունք ունէր կոչելու փառքն ու պատկը արարչագործութեան և Քոնգ՝ Մեծ-Էակը, իբրև տեսանելի և մանրունկարուած համայնապատկերը իմանալի Գերագոյն-Էակին: Այսպէս գերապաշտութեան հիմնադիրին Մարդկութեան Կրօնքը պիտի ըլլար իրապէս ընդհանրական կրօնք մը, եթէ անոր գաւառներն ու վարդապետութիւնները, իր հաւասարակշռութիւնը կորստնցուցած մեծ մտքի մը ծնունդ, հիմնուած չլլային նիւթապաշտ և ըզգայապաշտ սկզբունքներու վրայ՝ ուր բարոյականը շատ վիպալիս Խորհուրդի մը մէջ կը դնէ իր նշանակութիւնը և անգիտակցօրէն անհատապաշտ զգացումի մը վերլուծումն է միայն: Վասնզի իրաւ է որ նա ո՛չ միայն կը քարոզէր աշխարհորոշը՝ բռնին ամենախիստ առումովը, այլ նաև քահանայապետաբար կը հրամայէր անձնասեցութիւնը, բայց վերջապէս իր կենսի և յետոյ անոր յիշատակին պաշտումի բարոյականութեամբը գինովցած իմաստասէրն էր այն: Մեծած հոգիներու գերը զարմանալի է

երբեմն մարդկութեան կեանքին մէջ: Եթէ յիշեցինք Քոնգի Դրապաշտութիւնն ու անոր Մարդկութեան Կրօնքը, պատճառն այն է որ ներկայ Վերածնութեան մէջ անոնց վերկենցողիլը կը տեսնենք առաւել կամ նուազ եղանակաւորումով մը: Նիւթի աստուածացումը դարուս Նոր-Դրապաշտութեան անկիւնաքարն է և իրապաշտ Դիտութիւնը անոր միակ գաւառները: Բնազանցականը, Բացարձակին գիտութիւնը, նիւթէն գուրս հետեւաբար և ցնորական գիտութիւն մ'է, կամ աւելի ճիշտ մտքի զառանցանք մը՝ որ խանդարուած գործանանաւորութիւն մը կը մատնէ: Կեանքը ամբողջութիւնն է Բնութեան ճարտարութեամբ աւելցեցուցուած կենսասահլէներու՝ որոնք իրենց բնական յարմարութիւններուն համաձայն կը կազմեն այս կամ այն գործարանաւորեալ մարմինը: Այդ մարմիններուն մէջ՝ շնորհիւ յաջորդական եղափոխութիւններու կատարելագործուած՝ ամենագերազանցը Մարդն է: Մարդուն անհատական կեանքին ուսումնասիրութեան համար անհրաժեշտ բնախօսական գիտութիւնն է, հոգեբանութիւնը անոր վերացական մեկնութիւնն է: Իսկ հաւաքական կեանքի վերլուծումը բնկերաբանական գիտութեան մէջ է, գիտութիւն մը որ խարխիւն է մարդկութեան արդիական կրօնքին:

Կարելի չէ քննադատել գրապաշտութեան այն բոլոր պատճառարանութիւնները՝ որոնցմով ան կը փորձէ մարդն ընել կեդրոն իր բոլոր խուզարկութիւններուն և վարդապետութիւններուն: Նոյնպէս իր կատարեալ

իրաւունքին մէջն է՝ երբ ինքզինքը կը բերէ ի սպաս նիւթին և իրականին մշակութեան և պաշտամունքին։ Նիւթի իմաստասիրութիւնը, ինչպէս երբեմն նիւթի կրօնքը, իր տեղն ունի մարդկութեան քաղաքակրթութեան մէջ։ Բայց Դրապաշտութիւնը կը սխալի երբ ուժի, զօրութեան և հոգիի իմաստասիրութիւնը կ'ուզէ լուծել բնա-տարրալուծական վարդապետութիւնով մը կամ տիեզերական մեքենականութիւնով մը՝ որ նիւթը կը ձեւակերպէ։ Բառերը ո՛րքան ալ գիտնականական՝ չեն կրնար կորսնցնել բոլորովին իրենց սկզբնական իմաստը՝ որ երբեմն հին կրօններու խորհուրդներու հիմը կը կազմէր։ Այդ պիտի բառեր են ոյժ, զօրութիւն և հոգի, իբրեւ իրերու իմացական, բարոյական և կրօնական յատկութիւնները՝ որոնք միշտ պիտի ախրապետեն նիւթին, վասնզի պիտի կենսաւորեն ու պիտի ապրեցնեն զայն ներգործաբար։

Դրապաշտութիւնը, ուրեմն ինքնին թերի վարդապետութիւն մ'է, ընկերաբանական բարդ հարցերը լիովին լուծելու անկարող։ Այդ թերին մասամբ կարելի է լեցնել Կիտնական հոգեբանութիւնով մը և մասամբ ուղղափառ բանավարութիւնով մը, (rationalisme). վասն զի հոգին՝ աննիւթական սկիզբն է՝ որ կը կազմէ Կեանքը, իր անցեալով և ապառնիով, և Բանն (raison) է որ, իբրեւ աղբիւրը բոլոր յայտնութիւններուն, կը վերապրեցնէ, կը քննէ և կը վերլուծէ այդ կեանքը, մարդկային բազմակողմանի զարգացումի մը՝ քաղաքակրթութեան աստղճները մատակարարելով։ Առանց

ցաւի կարելի չէ դիտել այն տեսակ մը խաւարամտութիւնը՝ որ չուզեր ճանչնալ այս բանավարականութեան ճշմարտութիւնը, նկատելով զայն անիրաւաբար աստուածայինը թշնամանող մոքի մէկ յաւակնութիւնը կամ ըմբոստութիւնը։

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴՐԱՊԱՇՏ ԿՐԾՆՔԸ. ահա՛ իր Դարու վերածնութեան ռահվիրաներու մեծագոյն մասին վարդապետութիւնը՝ զոր գէթ իրենց յառաջագունեան (à priori) սկզբունքներուն խիստ հետեւական ուղղութիւնով մը անոնք կը քարոզեն մեզ։ Մենք ի՞նչ կ'ընենք։ Վերածնական այս անտեղիտալի հոսանքին առջեւ ի՞նչ դիմք բռնած է մասնաւորապէս Հայ եկեղեցին։ Պատասխանը չա՛տ ցաւալի և անխոռաղմանելի պիտի ըլլար։

Մարդկութեան դրապաշտ կրօնքին դէմ մենք ունինք ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՊԱՇՏ ԿՐԾՆՔԸ, Քրիստոնէութիւնը, դարերու կենսականութեամբը և իր ճշմարտապէս ընդհանրական նկարագիրովը պատկառելի՝ որուն գերազանց նպատակը եթէ ո՛չ նիւթին՝ այլ մարդուն աստուածացումն է բարձրակապէս։ Մարդեղութեան վարդապետութիւնը, մէկ կողմ թողլով պահ մը հրամանակարգական (dogmatique) մանրամասնութիւնները՝ որոնք այնքան պառակտումներու և թիւրիմացութիւններու ծնունդ տուին եկեղեցիին ծոցին մէջ, զայդ կը հաստատէ։ Քրիստոս մարդ-Աստուածն էր, մարդկային բանին (raison) և աստուածային Բանին (Verbe) միաւորութիւնը, անոր մատուցուած պաշտամունքն ալ մարդացած Աստուծոյն և աստուա-

ծացած Մարդուն էր միանդամայն։
Իր հոգեւորական և աշխարհական
նուիրապետութիւններով, Եկեղեցին,
որ ընդունարանն է այդ վսեմ կրօն-
քին և նուիրուած է անոր սրբազան
պաշտամունքին, միջան կրցած է կա-
տարել իր պարտականութիւնը։

Տիեզերական կեանքի սկիզբը շար-
ժումն է։ Կրօնքը, իբրեւ այդ կեան-
քի մէկ յայտնութիւնը՝ ընդհանուր
մարդկութեան գիտակցութեան խո-
րը կատարուած, պէտք է ունենայ իր
մէջ այդ շարժումը։ Բայց շարժումը
մէջ թէ նիւթին՝ այլ զօրութեան ար-
տայայտութիւնն է։ Կրօնքի զօրու-
թիւնը հոգին է, այսինքն այն կարո-
ղութիւնը՝ որ նիւթին մէջ՝ այլ նիւ-
թէն անկախ կ'ապրի, զայն կ'ապրե-
ցնէ, կը կերպարանափոխէ, կը նո-
րոգէ, կը վերածնէ, կը բարեշրջէ ու
կը յաւերժացնէ։ Կրօնքի յաւիտենա-
կանութեան հետեւաբար և ճշմար-
տութեան գաղտնիքը այդ անսպառ
զօրութեան մէջ է՝ որ կ'ընդհանրա-
կանացնէ նաեւ զայն (կրօնքը),

Այդ հոգին կրցած ենք պահել
մեր Եկեղեցիին մէջ։

Կրօնքն ու ժողովուրդը համընթաց
ըլլալու են իրարու, հակառակ պա-
րագային մին պիտի զօրանայ ի վրաս
միւսին, ասիկա գրեթէ ճակատա-
գրական է։ Ազգերու պատմութեան
բոլոր դարաշրջաններու իմաստասիրա-
կան խուզարկութիւնները ցոյց կու-
տան թէ մի և է ազգ չկրնար՝ առանց
իր կենսականութենէն բան մը տու-
ժելու՝ միայլ լծացած վիճակի մը մէջ։
Լծացումը փճացում է, մահ է։ Կեն-
դանի ժողովուրդ մը կ'ապրի իր ամ-
բողջ հոգեբանութիւնովը, իր ամբողջ

աշխարհահայեացքովը, որոնք սակայն
ժամանակին հետ մէկտեղ կ'ընդլայ-
նուին, կը նորոգուին ու կը բարե-
շրջուին։ Գաղափարներու այս ընդ-
լայնումը ըմբոստացուցիչ նկարագիր
մ'ունի այն բոլոր դրութիւններուն
դէմ, որոնց մէջ ապրած են երբեմն
և որոնց զօրութիւնը ծծած սպառած
են անվերադառնալի իւրացումով մը։
Նոր պայմաններ, նոր պահանջներ
միայն պիտի կրնան գոհացնել ու ազ-
րեցնել զանոնք։ Երէկը նորոգուած
այսօրի մը պէտք է վերածնել, կարե-
նալ ապրեցնելու համար հոն միօրի-
նակութենէն շուտով ձանձրացող հո-
գին։

Հայոց Եկեղեցին, որ իրաւունքով
կը պարծի իր հնութեանը վրայ, շա-
րունական նորոգութիւններով միայն
կրցած է պահել իր գոյութիւնը, միշտ
խրաւցնելով ժառանգական զանգացո-
ւնք, գիտութիւնն ու յաւատարմութիւնը
և այսպէս շինելով իրեն համար ընդ-
հանրականութեան նկարագիր մը։

Բայց այս ընդհանրականութիւնը
ինչպէս ամէն տեղ, «ճակատագրական
և արտաքին օրէնքներու ազդեցու-
թեան տակ կատարուող անդիտակից
եղափոխութեան մը պտուղը չէ եղած»։
Հայ Եկեղեցիին մէջ ալ «ան կը ներ-
կայանայ իբրեւ անհատական օտեղ-
ծագործութիւնը, իբրեւ բարոյական և
ազատ գործը քանի մը ընտրուած հո-
գիներու, որոնց մէջ հին աւանդու-
թիւնը, խորին ճգնաժամով, կը զտուի
ու կ'ընդլայնուի»։

Պէտք է յիշել Լուսաւորիչը, որ
իբրեւ ճշմարտապէս ընտրուած հոգի
մը դարերու նախապաշարունակութեան
մէջ քարայրած առհասարակ աւանդու-

Թիւններու զտարանէն զուրս բերաւ Հայ Եկեղեցին՝ տալով անոր Քրիստոնէութեան ընդհանուր նկարագիրը, այն վրձինով, զոր առած էր Կեօսը իրայէն։ Յունական պատկեր մ'էր՝ զոր Ս. Գրիգոր և Տրդատ կը հաստատէին Հայոց աշխարհի մէջ։ Անակի որդին պիտի միայն կրնար ընել, սրա-տաւստում մը, ուսկից ժողովուրդը քիչ ժամանակի մը համար և փոքրիկ շրջանակի մը մէջ միայն պիտի կրնար օգտուիլ։ Բայց չիկայ աւելի դժուար գործ մը՝ քան կրօններու պատուաստումը։ Լուսաւորիչ, լուսապայծառ յայտնութիւնով մը ներշնչուած, կատարեց դժուարինը, չմոռնանք ըսելու թէ՛ առաքելական յատանումներէ ալ մեծապէս օգտուելով։

Կարելի՞ է մոռնալ Ե՞րբ դարը, ուր Հայ Եկեղեցիի հորիզոնին վրայ կը պրպղւային Լուսաւորութեան զոյգ մը աստղերը, անզուգական ռահվիրաներն ըլլալով գէպի գրական-կրօնական վերածնութիւնը։ Իբրեւ ժամանակի ոգին մարմնացումները կամ յայտնութիւնները նորոգուած կեանքով մը կ'ողելորէին Հայ Եկեղեցին, ստեղծելով ո՛չ միայն Ե՞րբ դարու ոսկի գրականութիւնը՝ այլ նաեւ հայկական անկախ Եկեղեցին՝ իր ուրոյն կազմակերպութիւնով՝ որ Քրիստոնէական կրօնքը աւելի մատչելի կ'ընէր Հայ ժողովուրդին։ Տոհմային բունը զօրացած էր ի վնաս Քրիստոնէական պատուաստին։ Սահակ և Մեսրոպ առանց սկարայնելու տոհմայինը՝ զօրացուցին պատուաստը, այնպէս որ բուն և պատուաստ իրերախառնուեցան, միասին աճեցան և կազմեցին նորոգուած նկարագիրը Հայ Եկեղեցին՝ որուն

մէջ Հայ ժողովուրդը դառաւ կեանքի զօրութիւնը։

Մեծ դարաշրջան մ'է նաեւ ԹԲՊ դարը Կիլիկիոյ սահմաններուն մէջ, ուր ողջամիտ, լայնախոհ ու դաւուր ոգին մարմնացնող մեծ Հայրապետը՝ Ն. Շնորհալին նոր շունչ մը կը գնէր եկեղեցական բոլոր կազմակերպութիւններուն և ըմբռնումներուն մէջ։ Ո՛վ կրցած է Թափանցիլ Հռոմկլայի այդ վեհօգի Դիտապետին Թաքուն գաղափարներուն՝ նա միայն կրնայ գնահատել այն հսկայ ծրագիրը՝ զոր ան կազմեց եկեղեցիներու միացումի գործը յաջողցնելու համար։ Ան լիովին ըմբռնեց կրօնքի հոգին և աւելի անո՛վ հետաքրքրուեցաւ քան թէ այն ձեւերով՝ որոնք կրօնքէն աւելի ժողովուրդներու հոգեբանութեան արտայայտութիւններն էին։ Եթէ ձեւերը կը պաշտպանէր յաճախ՝ այդ ո՛չ թէ յանուն կրօնքի էութեան՝ այլ տոհմային նկարագրի պահպանութեան համար էր։ Ձեռակաւ պիտի ախտաքիւնները արգելք չէին հոգեկան միտքեան՝ զոր շնորհալի Հայրապետը կը ջանար ամրապնդել բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջ։ Շնորհալին իր այս լայն ու ընդհանրական ծրագիրովը իր գարուն Սուրբը հանգիստացաւ արդարեւ։

Մենք հոս մեծ դարաշրջանները մանրանկարեցինք միայն։ Հայոց Եկեղեցիին մէջ գեռ կայ պատուաբեր շարք մը «Աստուծոյ մարդերու», որոնց «լուսապայծառ մտածութեան, անդրադարձ խորհուրդին և բարոյական ներշնչումին մէջ» կատարուած է աստուածային յայտնութիւնը։ Անոնք բոլորն ալ աշխատած են կենդանի պահել ու ծաւալել այն հոգին՝ զոր Քր-

ըխտոնէութիւնը առած է իր մեծ հիմնադրէն՝ Յիսուսէն:

Իսկ կարելի չէ առանց ցաւելու գիտել այն տխուր կայացումը՝ որուն ենթարկուեցաւ Հայ Եկեղեցին ժ.Բ. դարէն յետոյ: Ժ.Գ. դարու մատենադրական անկումի շրջանին յաջորդող ժ.Գ. դարը արդէն վարդապետական սնտոի վիճաբանութիւններու դարաշրջանի մը դուռը բացաւ, շնորհիւ միաբնակչական (ռնիքոռական) ամենաստորին և մեղմանող շարժումներու: Շնորհալին կարծես փակուած եղաւ Եկեղեցիի իսկապէս յառաջդիմական կեանքին, յաջորդեց ամբողջութեան և անկումի շրջան մը: Եկեղեցին ա՛լ դադրեցաւ ժողովուրդին հետ և ժողովուրդին համար ապրելէ, իր պերճաշուք ծիրանիին մէջ ինքնամփոփուած անշունչ շուռքի մը պէս, խորխտ ու արհամարհոտ հեղինակութիւնով մը բռնի իր պաշտամունքին հրաւիրեց զանի: Ասի իր կոչումին դէմ զեղծում մ'էր, որ շատ սուղի պիտի նստէր իրեն: Ժողովուրդը հետզհետէ անսարքեր՝ շարունակեց իր յառաջդիմութեան քայլերը որքան կը ներքին պայմանները, նոր լոյսերու, նոր ուղեցոյցներու առաջնորդութիւնով, և որ մը — այդ մեր օրն է — չուզեց կամ չկրցաւ ճանչնալ իր Եկեղեցին, որ ո՛չ հոգի ունէր և ո՛չ ալ խօսք... Կրօնք մը՝ որ հոգի չունի և Գիտութիւն մը՝ որ նիւթ չունի հաւասարապէս վտանգաւոր կամ զէթ անպէտէն մարդկութեան: Ահա այս է մեզի համար, այն գլխաւոր պատճառը՝ որով ժողովուրդը իրաւցրնէ ուժացած ու ցրտացած է իր Եկեղեցիէն:

Մարդկութեան ընդհանրական հո-

գեպաշտիկ կրօնքի մը սպասարկող Եկեղեցին, որպիսին է Հայոցը, պարտաւոր է դոհացում տալ մարդկային ընկերական, բարոյական, քաղաքական, և մէկ խօսքով քաղաքակրթութեան բոլոր պահանջումներուն: Մարդասիրութեան կրօնքը, բարիին պաշտամունքը, ճշմարիտին ու գեղեցիկին դաւանանքը, ասոնք պիտի ըլլան իր վարդապետութիւնները՝ համաձայն ժամանակի ոգիին՝ ուր աստուածային յայտնութեան մը հոգին կայ միշտ: Ի՞նչ ըսել սակայն՝ որ այսօր Եկեղեցին ո՛չ բեմ ունի, ո՛չ գեղարուեստ և ո՛չ վերջապէս այն բոլոր էական պայմանները՝ որոնք շինարար ոգի մը կ'ըստեղծեն, կ'արտայայտեն, հաւատացեալներ կ'ապրեցնեն հոգեւորող ներշնչումով մը: Գիտութիւնը հսկայաքայլ կը յառաջդիմէ, անողորմաբար ջախջախելով դարերու նախապաշարումներու կուռքերը — ինչ որ իր կոչումն է — , գիտակցութիւնները աւելի կը պայծառանան ու կ'իմաստնանան, հսկառակ երբեմնական շեղումներու, միտքը աւելի կ'ախորժի դրականէն, իրականէն՝ քան թէ ձեւականութիւններու մէջ վերացականացած կամ բիրտօրէն թանձրացած ու անբնական զարձած ճշմարտութիւններէն, իսկ Եկեղեցին շնորհիւ իր ընդհանրապէս ինկած պաշտօնէութեան որ անհասկնալիին մէջ կը սիրէ պարտրկել իր սին հմայքը (prestige), կ'ըմբոստանայ նոր պահանջումներուն դէմ և կը յամառի տառը հրամցնելու ժողովուրդին: Չիկայ մէկը, խոստովանիք, որ կա՛մ ձանձրոյթի, կա՛մ անհասկացողութեան, կա՛մ անսիրելութեան և կամ նոյն իսկ երբեմն նողկանքի տը-

պատրուծիւն մըշտանի իր հետ եկեղեցիէն դուրս: Պատճառը ուրիշ բան չէ՝ բայց եթէ նորոգող և կ'ազդուրող հոգիին պակասը: Եւ ասոր պատասխանատուութիւնը տարակոյս չիկայ թէ հոգեւորականութեան վրայ կը ծանրանայ մասնաւորապէս: Անոր մէջ կը պակսի Լոռաւորիչի, վերաւորողի զօրութիւնն ու կարողութիւնը, իբր թէ մեր նախնիք սպառած ըլլային զանոնք: Այն օրէն երբ հոգեւորականը « հայր », « տէր » և « սուրբ » պիտակ տիտղոսներուն մէջ ամփոփեց իր կոչումը՝ կարծես դադրեցաւ ըլլալէ իրապէս հայր, տէր և սուրբ, իր գործքով, կոչումով և նրկարագիրով, յարգելի ցանցառ բացառութիւնները չմոռնալով: Ան յաճախ նախնեաց կրօնքի անգիտակից և չահախնդիր ջատագովն է լոկ. կրօնք մը՝ որուն վեհ, պարզ ու յստակ խորհուրդները եղծուած են այսօր կրօնական նիւթապաշտութեան մը անբարոյ վարդապետութիւններով: Իմաստասիրական Դրապաշտութիւնը՝ յանուն Գիտութեան՝ նիւթն ունի իրեն իբր առարկայ, իսկ կրօնական Դրապաշտութիւնը՝ յանուն աստուածաբանութեան՝ ունի ձեւը, ծէսը, առանց զանոնք իմաստաւորող հոգիին՝ բարոյական զօրութեան: Գիտական Դրապաշտութիւնը նիւթապաշտ է ի վնաս կրօնքին, իսկ կրօնական Դրապաշտութիւնը նիւթապաշտ է ի վնաս գիտութեան: Գիտութեան և հակառակութեան անջրպետը ահաւոր է: Եւ հաշտութիւնը վերստեղծելու համար — վասնզի սկզբնաբար կրօնք և գիտութիւն իսկապէս տարբեր բաներ չէին — միակ միջոց մը կայ. « Պէտք

է որ գիտութիւնը կրօնական (religieuse) գառնայ և կրօնքը գիտական: Այս կրկնակ եղափոխութիւնը, որ արդէն կը պատրաստուի, վերջապէս և ստիպողաբար պիտի բերէ կրօնքի և Գիտութեան վերահայտութիւնը ներքնապաշտիկ (ésotérique) գետնին վրայ» (Ed. Schuré. Les grands initiés, էջ 548):

Քրիստոնէութիւնը վսեմ և վսեմին կրօնքն է: «Վսեմին յատուկ է ըլլալ միանգամայն պարզ, անհուն և յստակ» (նոյն, էջ 524): Պահած է եկեղեցին իր սկզբնական այս յատկութիւնները: Ճշմարտասէր խիղճներու կը թողունք պատասխանը: «Կրօնական քանի՞ պահելի բարգաւաճումներ — կ'ըսէ Օ Սապաթիէ — կարծես իրենց վախճանը կը գտնեն ճահիճի մը կամ մացառի մը մէջ»: Լուսաւորիչի յոյսը, Սահակ-Մեսրոպի ուսկիւն, Շնորհալիի շունջը, որոնցմով կերտուեցաւ չքեղօրէն ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄԱՐԴԿԱՌԻԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ, ՀՈԳԵՊԱՇՏ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ, ներելի՞ է փոխանակել մոլեռանդութեան խառառոյ, տգիտութեան կապառոյ և ապաշնորհ ուրացումի խորշակոյ, որոնցմէ չատ իրաւունքով պիտի խորչէր Մարդկութեան արդիական դրապաշտ կրօնքը:

Մեղի համար սրտագինս բաղձալի է այս երկու կրօններու գիրկընդխառնումը, ձուլումն ու միացումը, որոնցմէ կախում ունի քաղաքակրթութեան լրումն ու մարդկութեան փրկութիւնը:

Երանի՜ թէ Քրիստոսի «ԿՐԱԿ»ը, քրիստոնէական կեանքի կրօնական և ընկերական վերածնութեան էական պայման, բոլորքելով անհոգի ու անջիղ հոգեւորականներու սրտին մէջ՝ կարենար մաքրել իր եկեղեցին, վերադարձնելով անոր զտուած ու բիրեղացած ՀՈԳԻՆ:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱԻԱԳԻՏԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ Ս. ԱՌԱՔԵԼՈՑՆ

(ի ձեռն Կղեմայ, առաքեալ հեքսանոսաց)

(Շար. 4րդ թիւեն)

ԾԱ. — Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ կա՛մ բնաւ իսկ ոք ի քահանայական կարգէ եթէ յամուսնութենէ և ի մսոյ և ի գինւոյ՝ ո՛չ վասն ճգնաւորութեան՝ այլ պիղծ վարկանկելով զայնոսիկ՝ ի բաց մեկնի, մոռացեալ թէ ամենայն ինչ յոյժ բարի է, և թէ՛ արու և էգ արար Ստառած զմարդն, այլ հայտնելով անգոմեհացէ զգործաւորութիւնն (ծիւսթւրց(ա) կամ ուղղեսցի, կամ լուծցի, և յեկեղեցւոյն ի բաց ընկեսցի հմանապէս և ժողովրդականն:

ԾԲ. — Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց զարձեալս ի մեղաց ոչ ընկալցի այլ ի բաց մերժեսցէ՝ լուծցի, զի արամեցոյց զՔրիստոս՝ որ առաջն, «Ուրախութիւն եղիցի յերկինս ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ»:

ԾԳ. — Եթէ եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւազ յաւուրս ածնից ոչ ճաշակիցէ ի մսոյ կամ ի գինւոյ՝ պիղծ վարկուցեալ զայնոսիկ և ո՛չ վասն ճգնաւորութեան՝ լուծցի, որպէս խարեալ ոք խղճիւ մտացն (*), և պատճառք գայթակղութեան բազմաց եղեալ:

ԾԴ. — Եթէ ժառանգաւոր ոք ի կապեղով (χοπηλεις) ըմբռնեսցի ուսելով՝ որոշեսցի, բայց ո՛չ ի պանդոկոսջ՝ ի ճանապարհի՝ առ հարկի լուծանելոյ (**)

(δλ ἀνάγκην καταλύσαντος):

ԾԵ. — Եթէ ոք ժառանգաւոր թշնամանեսցէ զեպիսկոպոսն՝ լուծցի. քանզի «զիշխան ժողովրդեան քո մի՛ հայտնիսցես» (Ելք. ԻԲ. 28):

ԳԶ. — Եթէ ժառանգաւոր ոք թշնամանեսցէ զերէց կամ զսարկաւազ՝ որոշեսցի:

ԾԶ. — Եթէ ոք (ժառանգաւոր) զկաղ՝ զիսու՝ զկոյր կամ զոսան (***) վնասեալն

այսրանեսցէ՝ որորշեսցի, նոյնպէս և ժողովրդականն:

ԾԷ. — Եթէ եպիսկոպոս ոք կամ երէց անփոյթ առնելով զժառանգաւորոքն և զժողովրդով ոչ խրատեսցէ զնոսս ի բարեպաշտութիւն՝ որոշեսցի. և եթէ յամուսնցի յանփութեանն՝ (ῥαθυμ(α) լուծցի:

ԾԸ. — Եթէ եպիսկոպոս ոք կամ երէց ումիք ի ժառանգաւորացն՝ որ լարօտ իցէ՝ ո՛չ տացէ զպիտան, որոշեսցի, և եթէ յամուսնցի՝ լուծցի, իբրեւ սպ. նող եղբոր իւրոյ:

Կ. — Եթէ ոք զստաքեալս վերագրեալ (ξευδεπιγραφα) զամբարշտաց գիրս իբրեւ զսուրբ գիրս մուծցէ յեկեղեցի առ ի վնաս ժողովրդեան և ժառանգաւորաց՝ լուծցի:

ԿԱ. — Եթէ ամբաստանութիւն ինչ լինիցի զհաւատացիւց՝ վասն պոռնկութեան կամ չնութեան կամ այլ ինչ գործաց հրաժարեղեսց և յանդիմանեսցի, ի ժառանգաւորութիւն մի՛ եկեսցէ:

ԿԲ. — Եթէ ոք ժառանգաւոր՝ վասն մարդկային երկիւղի հրէի կամ հեթանոսի կամ թերահաւատի՝ ուրասցի եթէ զանուն Քրիստոսի ունի՝ ընկեսցի արտաքս (ἀποβ-αλλεσθω), (1) իսկ եթէ զանուն ժառանգաւորի ունի՝ լուծցի, և ապաշխարութեամբն իբրեւ ժողովրդական ոք ընկալեալ լիցի:

ԿԳ. — Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ կերիցէ միս արեամբ չլնչոյ, կամ մեռելոսի, լուծցի. քանզի տրգելուն զայս օրէնք: Ապա թէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի:

ԿԴ. — Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցէ ի ժողովարանն հրէից կամ թերահաւատից՝ աղօթակից լինել նոցա, լուծցի և որոշեսցի:

ԿԵ. — Եթէ ժառանգաւոր ոք ի կռուի հարցէ զոք և ի միով հարմանէն մեռցի, լուծցի վասն յանդգնութեանն. ապա թէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի:

(*) Ա. Տիմ. Դ. 2

(**) Թ. լինոյ գրչագրական սխալ է:

(***) Մեր կանոնագիրք ունի զղեմն

(1) Թ. լուծցի եւ որոշեսցի

ԿԶ. — Եթէ ոք ժառանգաւոր գացի զօր կիւրակէին կամ զշաւաթին պահելով բաց ի միոյն միայն (1), լուծցի. և եթէ ժողովրդական իցէ՝ որոշեսցի:

ԿԷ. — Եթէ ոք զկոյս բռնարարեալ կալցի՝ որոշեսցի, և մի՛ լիցի նմա արժան ա՛յլ առնուլ, այլ զնոյն զայն ընդ որ հաճեցաւ. թէպէտ և ի սառակաւոց (πενίχθ) իցէ:

ԿԸ. — Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ երկրորդ ձեռնադրութիւն ընկալցի յովհեքէ, լուծցի նա՛ և որ ձեռնադրեացն, բայց եթէ ցուցցի ի թիրահաւատիցն ունել նմա զձեռնադրութիւնն. քանզի յայնպիսեացն միլրտեալքն կամ ձեռնադրեալք ո՛չ հաւատացեալս և ո՛չ ժառանգաւորս կարեն լինել:

ԿԹ. — Եթէ ոք եպիսկոպոս՝ երէց կամ սարկաւազ կամ սաղմոսերգու զսուրբ քառանորդան (Չառկի) ո՛չ պահեսցէ, կամ զյորեմ շաբարի եւ զուրքար (2), լուծցի. բայց եթէ վասն հիւանդութեան մարմնոյ խափանեսցի. իսկ թէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի:

Հ. — Եթէ ոք եպիսկոպոս՝ երէց կամ սարկաւազ կամ ընաւ իսկ ոք ի ժառանգաւորաց կարգէ պահեսցէ ընդ հրէայսն կամ տօնեսցէ ընդ նոսա, կամ ընկալցի ի տօնից նոցա ընծայս (ξένιον), որպիսիք են բաղարջ կամ այլ ինչ՝ լուծցի. իսկ թէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի:

ՀԱ. — Եթէ քրիստոնեայ ոք ձէթ տարցի (մատուցէ) ի մեհեանս հեթանոսաց կամ ի ժողովարանս հրէից ի տօնս նոցա, կամ ճրագունս լուցցէ (*), որոշեսցի:

ՀԲ. — Եթէ ժառանգաւոր ոք կամ ժողովրդական ի սուրբ եկեղեցւոյն առցէ (բարձցէ) մոմիղէն կամ ձէթ՝ որոշեսցի, և հնդապատիկ տաւփեսցի հանդերձ որով էստան:

ՀԳ. — Զանօթ ոսկեղէն կամ արծաթեղէն սրբեալ՝ կամ զօթոց ինչ մի՛ ոք յիւր պէտս գողացցի, զի օրինազանցութիւն է. ապա թէ ոք ըմբռնեսցի՝ պատուհասին որոշեսցի (ըստ յն. որոշմամբ պատուհասեսցի):

(1) Մարկիոնեանք կը պահէին կիւրակէ օրերուն. — Միացն մի շաբաթն անուոս Աւագ շաբաթուն օրն ր:

(*) Ըստ Հեթէլի հոս յիշուած չորեքշաբաթիով (τέτρες եւ ոչ τετάρτη) պէտք է. աւագ եօթնէկի առջի չորս օրերը հասկնալ, եւ Παρασχευή ուլ ալ Աւագ Ուրբաթ կակ Աւագ Շաբաթն իմանալ:

(*) Գրչագրական սխալով մեր կանոնագրաց մէջ յոցցե բայը եղած է յոցցի:

ՀԴ. — Եպիսկոպոս ամբաստանեալ զուովհեքէ յարժանահաւատ արանց՝ հարկ է զի կոչեսցի (յատեան) յեպիսկոպոսաց. եթէ պատասխանի տացէ և խոստովանեսցի կամ յանդիմանեսցի՝ սահմանեն զպատուհասն. ապա եթէ կոչեսցեալ՝ ոչ լուծու, կոչեսցի երկրորդ անգամ առաքելոց առ նա երկուց եպիսկոպոսաց. ապա եթէ և այսպէս արհամարհեալ ո՛չ տացէ պատասխանի (1), ժողովն հատցէ վճիռ որ ինչ արժան թուեսցի, զի մի՛ համարեսցի (ամբաստանեալն) փախստեամբն (ի դատաստանէ) չահել:

ՀԵ. — Ի վկայութիւն զեպիսկոպոսէ թեւաւաւատ զոք մի՛ ընդունել, այլ և ո՛չ ի հաւատացելոց զմի և եթ ոք. քանզի «ի բերանոյ երկուց կամ երկից հաստատեսցի ամենայն բան»:

ՀԶ. — Ո՛չ է պարս եպիսկոպոսի՝ եղբոր կամ որդւոյ կամ ալլում ազգականի չընորհել (զկարգ ձեռնադրութեան) մարդկային սիրով. զի ո՛չ է արժան զեկեղեցի Աստուծոյ զնել ընդ ձեռամբ ժառանգողաց. ապա թէ ոք արասցէ զայս, սահաստատ լիցի ձեռնադրութիւն նորա, և ինքն որոշմամբ պատուհասեսցի:

ՀԷ. — Եթէ ոք խեղ ակամբ կամ վիրաւոր անդամօք՝ արժանի՛ իցէ՝ եպիսկոպոս եղիցի. զի ոչ խեղութիւն մարմնոյ պղծէ վնաս, այլ հոգւոյն պղծութիւն:

ՀԸ. — Խուլ և կոյր մի՛ լիցի եպիսկոպոս, ո՛չ իբրեւ զպղծեալ, այլ զի մի՛ իրք եկեղեցւոյն խափանեսցին:

ՀԹ. — Եթէ ոք դեռ ունիցի՝ ժառանգաւոր մի՛ եղիցի, և մի՛ ընդ հաւատացեալս յաղօթս կացցէ, իսկ մաքրեալն ընդունելի լիցի, և եթէ իցէ արժանի՝ եղիցի:

Ձ. — Զառ ի հեթանոսաց եկեալն և մրկրաւեալն կամ որ ի խառնակ վարուցն է՝ ո՛չ է արդար վաղվաղակի յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն, քանզի անիրաւ է որում չիցէ ցուցեալ զփորձ՝ այլոց լինել վարդապետ, բայց եթէ յաստուածային շնորհաց եղիցի այն:

ՁԱ. — Ասացաք թէ ո՛չ է պարս եպիսկոպոսի կամ երիցու արկանել զանձն յերկրաւոր հոգս, այլ պարապել եկեղեցական պիտոյից. կա՛մ հաւանեսցի չառնել զայդ, և կա՛մ լուծցի. զի ո՛չ ոք երկուց անբանց

(1) Հայ. բնագիրը երրորդ անգամ ի կոչում մըն ալ կ'օրինալորէ:

կարէ ծառայել, ըստ տէրունական հրա-
մանին :

26. — Ծառայ ի ժառանգաւորութիւն
ընձեռել (προχειρίζεσθαι) առանց տէ-
րանցն կամաց՝ ո՛չ հրամայեմք ի տրամու-
թիւն ստացողացն, քան այս կործանումն
տանց գործէ. ապա թէ երբեք արժանի
երեւեցի ծառայն առ ի ձեռնադրութիւն
աստիճանին, որպէս Ռեսիմոսն մեր երե-
ւեցաւ (հմմտ. Փիլիմոն, 14), և թողա-
ցուցեալ տէրանցն՝ և ազատեալ ի բաց ա-
ռաքեացն զնա ի տանէն, եղիցի :

27. — Եպիսկոպոս՝ երէց կամ սարկա-
ւազ զօրականութեան (στρατεία) պա-
րապեալ՝ և զերկոսեան կամեցեալ ունել՝
զհռոմէականն իշխանութիւն և զքահա-
նայութեան հոգս, լուծցի. զի որ կայսերն
է՝ կայսեր և որ Աստուծոյն է Աստուծոյ :

28. — Որ ոք թշնամանէ զթագաւորն
կամ զիշխան, պատուհաս կրեացէ, եթէ
ժառանգաւոր իցէ լուծցի, իսկ թէ ժողո-
վրդական՝ որոշեացի :

29. — Մեզ ամենեցուն ժառանգաւո-
րացս և աշխարհականաց եղիցին պատուա-
կան և սուրբ զիրք՝ ի հնոց կաթարանաց
Հնգամատեանն Մովսիսի .

1. Ծնունդք
2. Ելք
3. Դէտականք
4. Թիւք
5. Երկրորդ Օրէնք
6. Յետուայ Որդւոյ Նաւեայ
7. Դատաւորք

Հռութ

- 8-9 Թագաւորաց (Չորս զիրք)
10. Մնացորդաց մարենին աւուրց (եր-
կու զիրք)
11. Եզր (երկու)
12. Եսթեր
- Մակարայեցոց (երեք զիրք)
13. Յոր
14. Սաղմոս

Սողմոն (երեք) = 15 Առակք, 16 Ժո-
ղովող, 17 Երգ երգոց,

18. Մարգարէք (երկուսասան)
19. Եսայի
20. Երեմիա

21. Եղեկիէլ

22. Դանիէլ

Սիրաք՝ որ իմաստութիւն ուսուցանէ
մանկանցն մերոց :

Ի Նորոյ Կաթարանաց

Աւետարանք չորք. — Մատթէոս,
Մարկոս, Դուկաս, Յովհաննէս :

Պողոսի Թուղթք չորեքտասան

Պետրոսի Թուղթք երկու

Յովհաննու Թուղթք երեք

Յակոբու Թուղթ մի

Յուդայի « «

Կղեմայ Թուղթք երկու, և ձեզ և-
պիսկոպոսացդ ի ձեռն հմոյս Կղեմայ
պատուէրք ի զիրս ութ, զորս չէ
արժան հրապարակել վասն որ ի նո-
սա խորհրդոցն, և Գործք Առաքե-
լոցն մերոց (*) :

Ս. Ս. Կ.

ՍՏԳՏԱՆԲ

«Տաճար» հրապարակով ստղտանք պիտի
ուղղէ այն բոլոր հոգեւորականներուն՝ ու-
րոնք իրենց կոչումին և եկեղեցական կար-
գապահութեան դէմ գործել կը յանդգնին :

Այս անգամ առանց անունի յիշատա-
կութիւն մեր ստղտանքը կ'ուղղենք այն
քահանային՝ որ հակառակ Կեդր. Կրօն.
Ժողովի որոշումով Ս. Պատրիարքի պաշ-
տօնական յանձնարարագիրին և խաղի-
րայական դարձուածքով մը մեռելական
անհարկի թափօր մը կատարել տալ համար-
ձակեցաւ : Կեդր. Կրօն. Ժողովը պարտաւոր
է յարգել տալ իր մանաւանդ օրինաւոր և
բարեկարգական որոշումները : Մենք ա-
նոր լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք
այսպիսի զեղծումներու և զեղծարարներու
վրայ և կ'առաջարկենք խոնարհարար
խափու պատժել այդպիսիները, իբրեւ օրի-
նակ ուրիշներու :

[*] Հիմ եւ Նոր կաթարանի այս յուցակագրու-
քիւնը՝ ամբողջովին կամ մասամբ կը պակսի մեր
Կոնոնագիրներուն մէջ, մանաւանդ Նորին մասը՝
որ բնական յաւելումներ կան :

ԿՐՕՆԱՆԵՐԱԿԱՆ

ՄԻԱՅԱԾ ՔԱԼԵԼ

Տաճարի Դ. Թիւին մէջ կը հարցնէինք թէ Հայ Եկեղեցականութիւնն ի վիճակի՞ է իր նուիրական պաշտօնը կատարելու, և ի՞նչ ուղղութեամբ ու ծրագրով պէտք է գործէ:

Բարեպատեհ զուգադիպութեամբ մը նոյն թիւին մէջ հրատարակուած կը տեսնուէին Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրատարակութեան յանձնած Եկեղեցական Կանոններէն այնպիսի հատուածներ, որ հին առաքելական դարերէն կուգային մինչև մեր օրերը՝ յիշեցնելու ինչ որ կրնանք ընել ու չենք ըրած, ցուցնելու ճշմարիտ ուղեգիծը՝ Հայ Եկեղեցականութեան, ուրկէ պէտք է քալէ ինքը՝ առաջնորդելու համար ժողովուրդն ալ ճշմարտութեան և ստոյգ բարոյակա-նութեան չիտակ ճամբուն մէջ:

Այդ կանոններու ուշադիր ընթերցումով հանդերձ, պէտք է խոստովանիլ թէ Հայ հոգեւորականութիւնը՝ հակառակ որ օտար եկեղեցականութեան հետ բաղդատութեան դրուելով անկէ բարձր մակարդակի մը վըրայ կը գտնուի անբասիր կեանքի և բարոյականի տեսակէտով, դժբախտաբար վար կը տեսնուի անկէ — մասնաւորապէս բողոքական և լատին եկեղեցականութե-նէն — միտքի ընդհանուր զարգացման և եկեղեցական գիտութեանց հմտութեան պիտակէտով: Ասիկա կը համարձակինք հաստատել, աչքի առջև ունենալով Ար-մաշի Դպրեվանքին վերջին երկու տաս-նեակ տարիներուն յառաջ բերած գեղեցիկ արդիւնքները, որ ընդհանուր խեղճու-թիւնը աւելի՛ ցայտեցնող միութարական բացառութիւններ են միայն:

Իրական մանրադէպ մը՝ գաղափարս ա-ւելի յստակ բացատրած ըլլալու համար. —

Պոլսոյ կեդրոն թաղէ մը քիչ չտտ ուսեալ մէկը որ զաւակ մ'ունէր ամերիկեան

վարժարանի մը մէջ, և իբր Հայ. Եկե-ղեցւոյ ճշմարիտ գաւակ՝ նախանձանդիւր ըլլալով իր զաւկին ճշմարտապէս հայ կրթ-թութիւն մը պրուելուն, քանիցս բանա-վէճեր ունեցած էր վարժարանի տեսչու-թեան հետ, քահանայաւթեան կը հրաւիր-ուի: Զեռնադրութենէն առաջ նոյն անձը կ'այցելէ ամերիկեան վարժարան, մնաք լսարով ըսելու և զաւակը տեսչութեան մասնաւոր հոգատարութեան յանձնելու: Այդ անձին քահանայացման լուրը գոհ կը թողու միսիոնարութիւն, որ իր գոհունա-կութիւնը կը բացատրէ սա բառերով.

— Ուրախ եմ որ ձեզի պէս մշակուած միտքի տէր մէկը կը կոչուի հայ ժողո-վուրդի հոգեւոր կեանքին առաջնորդ ըլ-լալու. որովհետև ցաւօք դիտած եմ որ հայ եկեղեցականութեան մտքի լուսաւո-րութեան աստիճանը վաղ է ժողովուրդին զարգացումէն, մինչ պէտք է անկէ քանի մը աստիճան վեր ըլլար:

Խօսակիցն անշուշտ աշխատեցու Հայ Ե-կեղեցականութեան պատուարեր բացառու-թիւնները ցուցնել իրեն նմոյշ ընդհանու-րին՝ բարձր բունելու համար հայ կղերին դիրքն ու արժանապատուութիւնը. բայց չզիտենք թէ իր խօսքերն ո՛րքան ազդե-ցին յստակասեմ օտարուհւոյն միտքին վրայ:

Ինչ որ ալ ուղենք ըսել, անհերքելի ի-րողութիւն է ճշմարիտ զարգացումի պա-կասը՝ հայ կղերին — մասնաւորապէս առաջ-նացեալ կղերին — ստուար մեծամասնու-թեան քով: Ասիկա ամէնէն խոշոր վէրքն է հայ հոգեւորականութեան, և հիմնական մէկ պատճառը՝ ժողովուրդին իր Եկեղե-ցիէն ուժանալուն, հաւատքէ և անոր ա-նուշ միութարութիւններէն զուրկ՝ սկիւղ-տիկ, չոր կեանքով մ'ապրելուն: Եւ ի՞նչ պէս կարելի է որ ժողովուրդ մը կրօնական անտարբերութեամբ չհամակուի, երբ իր վարժարաններուն մէջ կրօնքի գիտութիւնը մեռեալ տառ մ'է լոկ, ձեւական բան մը

միայն, և երբ իր կրօնականները Նոյ նահապետէն մնացած հասարակ-անդիք բանաձևեր միայն ունին, իրենցմէ շատ աւելի մշակուած միտքի տէր հասարակութիւն մը մտնելու համար ճշմարիտ ատուած պաշտութեան շաւղին մէջ:

Որո՞ւնն է յանցանքը՝ Հայ կրօնականութեան շատ յետնեակ զարգացում մ ունենալուն: Անշուշտ պատասխանատուութեան մեծագոյն բաժինը ժողովուրդին վրայ կ'ընկնայ, որ չի մտածեր զարգացածը, կարողը, արժանաւորն ընտրել իրեն հովիւ, և յետոյ ըողոքի ձայներ կը բարձրացնէ այն ատեն միայն, երբ շատ ուշ է արդէն: Բայց կարելի չէ բոլորովին չքմեղել կրօնական դասակարգը, որ — ցաւ է ըսել — ժողովուրդէն շատ աւելի անտարբեր կը դառնար իր իսկ զարգացումին: Խօսելով մասնաւորապէս Պոլսահայ քահանայութեան վրայ — ինչ որ շատ դիւրաւ կարելի է տարածել նաեւ ամուրի եկեղեցականութեան — կրնանք հաւատաւ անկասկած թէ հողուադէպ բացառութիւններ են ատոնց մէջ՝ իրենց պաշտօնին բնութիւնն ու պարտաւորութիւնները ցուցնող գիրքեր վերծանողները, և աւելի՛ հազուադէպ՝ հայ հին Մատենադրութեան, և — եկեղեցական ընթերցողաժողովէն դուրս — Ս. Գրքի սատուածաշունչ խօսքերուն մօտէն ծանօթները: Չգիտեմ թէ քանի՞ եկեղեցական կրնանք համբել մեր մէջ, որ կոկիկ գրադարան մ'ունենայ, գո՛նէ հայ կրօնական Մատենադրութեան: Շատ շատ՝ լրագրի ընթերցողներ ենք մենք՝ հայ եկեղեցականներս, օրուան լրերերուն ծանօթանալու համար միայն, առանց միջազգային Մտքի շարժումներուն տեղեկանալու հոգածութեան: (Անշուշտ ուրախ պիտի ըլլայի, եթէ կարգակից եղբայր մը կարենար այս տիտուր իրողութիւնն հերքել համազօլ փաստերով): Քանի՞ եկեղեցական կը համրուի այսօր մեր մէջ, որ օրուան քանոնչորս ժամերէն զոնէ մէկն յատկացնէ իր մտքի զարգացումին, իր հոգեկան կեանքի շինութեան, իր պաշտօնին պարտականութիւններն յիշեցնելու նպաստող հին ու նոր գիրքերու

ընթերցման: Եւ եթէ անհատապէս իրենց մտքի մշակութեան հետամտողներ կը պակսին մեր մէջ, գոնէ ճիշդ մը չէ եղած հաւաքարար ընելու ինչ որ անշուտ անհասներ չեն կրցեր ընել... լսու ևս այդպիսի ճիշդ մ'ընող միամիտներու ջանքերը մնացեր են ամուլ, սպարդիւն:

Տխուր է ասիկա:

Քահանայական Միութիւնը, — նա՛ և Վարդապետական Միութիւնը —, նախընթաց տարուան ռզևորութեան չրջանին երկնուած, սաղմնային վիճակի մէջ մնաց, հակառակ որ շատ գեղեցիկ առաջադրութիւններ կային երկուքին ալ մէջ, և մասնաւորապէս կը մտադրուէր վճռական կարգադրութիւններ ընել ծխախորական դրութեան, և քահանաներու նիւթական վիճակին բարելաւութեան վերաբերեալ խնդիրներու մասին, որոնք յառաջադանը, և նոյն իսկ հիմնակէտը կրնան նկատուիլ բարոյական և իմացական վիճակի բարձրացման:

Եւ մտածել թէ ի՞նչ որ կարելի չէ եղած ի գլուխ հանել սահմանադրական թուրքիոյ մայրաքաղաքի եկեղեցականներուն մէջ, շատնց — 1896էն ի վեր — կատարեալ իրողութիւն մ'է խիստ հեռաւոր անկիւնի մը... Նոր-Նախիջևանի մէջ, որուն քահանաները չրջակայ վեց գիւղերու քահանաներուն հետ միանալով կազմած են ընկերութիւն մը՝ «Խնամատար հոգեւորականաց Նախիջևանի և գիւղօրէից»։ Այդ ընկերութիւնը՝ քահանաներու բաժանորդադրութեամբ և բարեպաշտներու նուիրատուութեամբ՝ ունեցիր է անցեալ յունիսին 7000 ռուբլի պատկաւելի գումար մը իրիւր գրամագլուխ. իր նպատակն է աղքատ քահանաներու, այրիացեալ երիցունիներու, քահանայից օրերերուն նիւթապէս օգնել և որոշ ամսական առլ, և պատահական կարօտ քահանաներու ալ անտոկոս փոխատուութիւն ընել, «Հիւսիսային Ուղեւոր», Բիւզանդիոն թիւ 3860):

Ռուսիոյ հեռաւոր մէկ անկիւնը, Հայ քահանաներու այս պատուարիւր ընթաց-

քը՝ իրենց նիւթակահէն անջատարար՝ մեծապէս նպաստած է անոնց բարոյական հեղինակութիւնը բարձրացնելու, միանգամ ընդմիջաւ զանոնք ազատելով մուրացկանութիւնէ։ Եկեղեցական մը որ ժողովո՞ւղին ձեռքը չի՝ նայիր, որ զարգացած է, և մանաւանդ զօրաւոր հաւատք ունի այն կրօնքին վրայ որուն պաշտօնեան է, անիկա միայն կրնայ հզօր թուամբ մըլլալ կրօնական անապրելիութեան, անհաւատութեան հեղեղին դէմ որ կը սպառնայ խղիւղ ձնհասնել բարեպաշտութեան, կրօնասիրութեան սրտապնդող զգացումներն հայ ժողովուրդին մէջ. անիկա՛ պիտի գիտնայ ամէնէն առաջ անձին օրինակով ցուցնել գիտակցութիւնն իր պաշտօնին, սիրտեղ, ուսումնասիրել ժողովուրդին հոգեբանութիւնը, ճանչնալ ժողովուրդին հոգիին ծալքերը, կրթել, ազնուացնել անոր սիրտը, գիտութեան, եղբայրսիրութեան, ընկերային համերաշխութեան գեղեցիկ սերմերը ցանկել հոն. անիկա միայն պիտի կրնայ առնելու մէջ իրբեւ հոգեւոր հայր մը ստարածել Աստուծոյ խօսքը՝ ազդուօրէն լրանել ընելով իր ձայնը, եկեղեցիներու բեմէն ճշմարիտ, ժողովրդական պերճախօսութեամբ մը քարոզել մարդասիրութեան կրօնքին վսեմ պատուիրանները, և կամ զբաւան հրապարակին վրայ ուսումնասիր միտքերու առջեւ պարզել կրօնի հակառակորդներու սնոտի քննադատութեանց վճռական, համոզիչ հերքումները։

Ահա՛ ծրագիր մը՝ ո՛րքան համեստ իր ամբողջ վիճակին մէջ, նոյնքան ալ ընդարձակ իր գործադրութեան մէջ, որ մեծ հեղինակութիւն, խորունկ հմտութիւն, և ժողովրդային պէտքերու ստոյգ ճանաչում կը պահանջէ ամէն բանէ առաջ։

Սպասելով, ուրեմն, որ Հայ ժողովուրդը զիտակցօրէն ու լիովին ի գործ դնէ եկեղեցականներու ընտրութեան մէջ ունեցած իր լայնարձակ իրաւունքը, և կարենայ նոր, օգտուած եկեղեցականներու — մանաւանդ քահանաներու — պատկառելի թիւով մը բարձրացնել Հայ Եկեղեցականութեան մակարդակը, բարձրա-

նալով ինք ալ անոր հետ, մեղի՝ այժմու եկեղեցականութեան՝ կը մնայ թօթափել մեր յոյլ և ծոյլ դանդաղութիւնը, մոռնալ քիչ մը՝ լոկ անձնական շահու հետամտելու ցաւալի ունակութիւնը, կազմակերպուիլ, կանոնաւոր Միութիւն մը կազմել, պարբերական հաւաքումներ ունենալ՝ լուսարանելու համար մէկըմէկ, կրօնական, ազգային, ժողովրդային հարցերու վրայ, խորհելու համար միջոցներ մեր նուիրական պարտականութեանց անթերի կատարման համար։ Այդպիսի Միութեան մը կանոնաւոր կազմակերպութեանէն ետքն է որ պիտի կրնանք խորհիլ, օրինակի համար, սա տեսակ կարեւոր հարցերու վրայ։

1. Ի՞նչ միջոցներով կարելի է եկեղեցականութիւնը մաքրել զինքը վարկաբեկող արատներէն։

2. Որո՞նք են լաւագոյն միջոցները՝ ժողովուրդին կրօնասիրական մարած և ուսման արծարծելու։

3. Եկեղեցականութիւնը պարտաւոր է միմիայն աղօթելու, մկրտելու, պսակելու և թաղելու դերին մէջ սահմանափակուիլ, թէ ընդհակառակն ժողովրդեան աշխարհային կեանքին մէջ ալ — իր կարողութեան և իրաւասութեան գծուած սահմանին մէջ — օգտակար դեր մը պէտք է կատարէ։

4. Ի՞նչ կարգի խնդիրներու մէջ կրնայ դեր ունենալ ինքը, և առ այդ ի՞նչ կերպով պէտք է պատրաստուի։

5. Ի՞նչ եղած է ցարդ և ի՞նչ պէտք է ըլլայ այսուհետեւ ամուսնացեալ և ամուրի կղերին դերը Հայ ժողովուրդի կեանքին մէջ, և պէ՞տք է ամուսնացեալ կղերին տալ այժմ ունեցածէն աւելի լայն պարտականութիւններ և իրաւունքներ։

Կարելի է անհունօրէն երկարել շարքը այն հարցումներուն և խնդիրներուն որ կրնան լուրջ խորհրդակցութեան առարկայ դառնալ եկեղեցականներու Միութեան մը մէջ։ Բայց ամէնէն առաջ այդ Միութեան կազմակերպութիւնն է անհրաժեշտը՝ առանց ստոր ոչինչ կարելի է ընել լրջօրէն։ Անհատական ջանքեր կա՛մ կը մնան լու-

լորովին ապարդիւն , և կամ շատ ճղճիմ , աննշան արդիւնք յառաջ կը բերեն բազմաթիւ տրուած աշխատութեան : Ու պէտք չէ կարծել որ անօրինակ , աննախընթաց բան մը կը պահանջենք : Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ կրօնական համաժողովները , ընդհանուր գումարումները սովորական են : Անգլիոյ և Ամերիկայի մէջ մասնաւորապէս՝ այդ կարգի հաւաքումներ յաճախադէպ են : Ոչ միայն շատ քաղաքներու մէջ կղերական Միութիւններ կան , այլ և այդ Միութիւնները , որոշեալ ժամանակամիջոցներու մէջ , համախումբ գումարումներ կ'ունենան կրօնական ընդհանուր խնդրոց վրայ խորհրդակցելու , վիճարանելու ի հարկին : Հայ Եկեղեցական Պատմութիւնն ալ յիշատակութիւնը կ'ընէ մեզի շատ կարեւոր եկեղեցական ժողովներու . — Վաղարշապատի ժողովները , Դըւինի , Արտաշատու , Շահապիւմի ևն . ժողովներ :

Ինչ որ կարելի եղեր է հին , տազնապալի ժամանակներու մէջ , ինչո՞ւ կարելի չըլլայ հիմա : Կրօնական , ազգային , ամուսնական , ընկերական բարդ , հրատապ խնդիրներ առաւել քան երբեք ստիպողական կը դարձնեն գաղափարներու հաղորդակցութիւնը կրօնի պաշտօնեաներու միջև . և սակայն Ազգ . Մասնադրութեամբ կանխատեսուած Համագումար ժողովն իսկ Պատրիարքի , կամ եկեղեցական երեսփոխաններու ընտրութեան ատեն միայն կը հրաւիրուի և կը գումարուի !

Պատիկ զանցառութիւն մը չէ այս :

Հայ Եկեղեցիի յետին պաշտօնեայ մը , յաւակնութիւն չունինք ուղեցոյց ըլլալ , ծրագիրներ պարզել ընդհանուր Հայ եկեղեցականութեան , որուն մէջ ազգասէր հոգիներ , բարձր իմացականութիւններ չեն պակսիր : Խոնարհ , պարզ թելադրութիւն մ'է ըրածնիս , թելադրութիւն մը որուն գործադրութիւնն անհրաժեշտ կը նկատենք ներկայ տազնապալի ժամանակին մէջ , երբ կրօնքի հաստատութիւն , խորարմատ ծառք փութեան որդով վարակուիլ կ'ըստպանայ :

Պէտք է միացած փառք , միասին խորհիլ ինչ որ պիտի ընենք , համեմատել գործեր :

ԶԱՐԲՈՒՅՐ ԳՍԱՆԱՅ

Պեթիքաւ

ՊՈԼՍԱՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ

Տաճարի վարչութիւնը մեծ շնորհակալութեամբ կը յիշատակէ քաջալերական արտայայտութիւններն որ կը շարունակուին մասնաւորապէս գաւառներէ և արտասահմանէն , ուր յուսացուածէն աւելի՝ համակրութիւն և ընդունելութիւն գտած է կրօնաթերթս : Նոյն համակրութիւնը կը շնչտուի Պոլսոյ մէջ ալ՝ բաղմաթիւ լրջամիտ անձնաւորութեանց կողմէ : Դժբախտաբար կարող պաշտօնեայի մը չզոյլութեան պատճառով Պոլսոյ մէջ թերթին առաքմանց գործը դեռ չէ հասած փափաքուած կանոնաւորութեան , որուն համար Պատ . բաժանորդներու համակիր ներողամտութիւնը կը խնդրենք , ապահովելով որ ներկայ թիւէն իսկ այդ կէտն ալ պէտք եղած արագութեան և ճշտութեան աստիճանին կը հասցուի :

Միւս կողմէ Պոլսոյ Արժ . քահանայից դատուն մասնաւոր ուշադրութեան կը յանձնարարուի Տաճար , որուն կարեւոր նպատակներէն մէկն է քայանահական դատուն զարգացումն ու բարձրացումը : Հեռեւապէս կը սպասուի որ նոյն բարեկրօն դասն ալ փութայ ո'չ միայն անձնապէս բաժանորդագրուիլ , այլ և ժողովուրդին մէջ այս թերթին ծաւալման հոգ տանիլ : Այս կերպով է որ պիտի օժանդակէ մէկ կողմէ կրօնաթերթիս նիւթական ապահովութեան , և միւս կողմէ պիտի նպաստէ ժողովուրդին մէջ արծարծելու Հայ կրօնքին , Հայ Եկեղեցիին սէրը , ինչ որ իր պարտականութեանց ամենակարեւոր ու զլխաւոր մէկ մասը կը կազմէ :

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԵՐԵՄԻՆԻՐԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՊԱՐԱԳԱՆԵՐ.— [Դուկ. Բ. 1—20]

«Ընդ աւուրան ընդ այնոսիկ» . խօսքի ձև մէ լոկ՝ որ նախորդ հաստատութիւն հետ ո՛ր և է կապ չունի և անորոշ ժամանակ մը ցոյց կուտայ : Օգոստոս , նախապէս Հռոմի եռապետներէն մէկը , իր թշնամիներուն դէմ մղած պատերազմներէն յաղթական դուրս գալով և լիազօր կայսր հռչակուելով՝ ի նշան խաղաղութեան դուրս ել տուաւ Յանուսի մեծանիւն դռները : Հռոմի հզօր իշխանութիւնը կը տարածուէր նաեւ ամբողջ Պաղեստինի վրայ , որուն գերիշխանն էր Օգոստոս : Սա պահ մը հանգստացած պատերազմի տաղտուկէն՝ «այլոսահազիր» կամ մարդահամար մը կատարելու հրամանը հանեց հռոմէական Պետութեան բովանդակ սահմաններուն մէջ : Այս գէպքը տեղի ունեցաւ Հռոմի թուական 746 ին , բայց հաւանաբար հրամանը Պաղեստինի մէջ սկսաւ գործադրուիլ 749 ին , այն ժամանակ՝ երբ Ասորոց ալ կուտակալ էր Կուրիրնոս :

Հռոմէական սովորութեան համաձայն իւրաքանչիւր մարդ իր անունը կ'արձանագրէր իր գտնուած քաղաքին տուժարին մէջ . մինչդեռ հրէականին համաձայն ամէն մարդ պարտաւոր էր իր նախահայրերուն քաղաքին կամ հայրենիքին մէջ երթալ սրճանագրուիլ : Ահա ասոր համար Յովսէփ հարկադրուեցաւ քանի մ'օրուան ճամբորդութիւն յանձն առնել՝ երթալու համար իր հայրենի քաղաքը Բեթլեհէմ : Հոս թէև միայն Յովսէփի համար ըսուած է «վասն լինելոյ նորա ի տանէ և յազգէ Դաւթի» , բայց յաջորդ համարին մէջ «մտանել յաշխարհագիր Մարիամնաւ հսնդեմ» խօսքը ցոյց կուտայ ինքնին թէ Մարիամ ալ զաւթիթի ցեղէն կը նկատուէր : Քրիստոսի ծնունդի թուականը արդիւնք է հաշուական վրիպանքի մը , որ Դիոնիսիոս Կարճիկի (+ 540) կը վերագրուի Սա փրկչական թուականը հաստատուելու ատեն՝

առաջին տարին հաշուած է Հռոմի թուական 753 էն : Մենք գիտենք սակայն պատմութենէն թէ Հերովդէս , որուն թագաւորութեան վերջին տարին ծնաւ Յիսուս , մեռած է Հռոմի թուական 750 ի Զատիկի միջոցներուն : Ուստի և փրկչական բուն թուականը կ'սկսի այժմի ընդունուած թուականէն 4 տարի առաջ :

Երկրորդ դժուարութիւն մը և անհամաձայնութիւն մը ծագած է նաեւ Քրիստոսի ծնունդի օրուան վրայ : Հռոմէականները այդ օրը կը նկատեն հոմ . 749 ի Դեկտմբ . ամիսի 25 ը , վասնզի Եղիսաբեթի յղութիւնը տեղի ունեցած կը համարին հոմ . 748 թշրին ամսուն 10 ին (Սեպտ . 27) : Սակայն այսօր պատմութեան անհերքելի վկայութեամբ հաստատուած է թէ ճշտագոյնն է Հռոմ . թ . 750 Յունվ . 6 ը : (Տե՛ս նաեւ Ենոքհալիի տեսութիւնը) :

Արեւմտաքի մէջ Ենունալը Դեկտմբ . 25 ին փոխադրուիլը առանց պատճառի չէր : Հռոմի մէջ Դեկտմբ . 25 ին կը կատարուէին Միկիի պաշտամունք և հանդէս : Զորքորդ դարուն Հռոմի Եկեղեցին խափանելու համար կռապաշտական այդ սովորութիւնները՝ միհրական (արեղակնային) տօնը փոխանակեց փրկչի (=արդարութեան արեգակի) տօնով : Այս սովորութիւնը քիչ ատենէն տարածուեցաւ նաեւ արեւելեան եկեղեցիներուն մէջ , բայց ի հայկ . եկեղեցիէն՝ որ պատճառ մը չունէր նախնական աւանդութենէն հեռանալու :

«Եղ զնա ի մարտ» . Պաղեստինի մէջ կը գտնուէին իջևաններ՝ որոնք բաղմամբ լայրեր ալ ունէին : Յուսարնոս քրիստոնեայ ջատագովը (+ 165) այս այրերէն մէկը կը նկատէ աւետարանի մէջ յիշուած մըտուրը : Այս մասին թէև աւետարաններուն մէջ որոշ խօսք մը չիկայ , բայց հնագոյն աւանդութիւնը նուիրականացուցած է այդ կնթաղութիւնը :

ՀՈՎԻԻՆԵՐՆ ՈՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ.— [Դուկ. Բ. 8—20] .— «Եւ հովիւքն էին ի սնդոցն յայն-

միկ բացօթեայք» . այսխօսքերէն կը հաս-
կըցուի սր Բեթլէհէմի բաւական մօտիկ
պէտք էր գտնուիլ այն դաշտավայրը՝ ուր
հովիւներ պայծառ գիշեր մը իրենց հօտերը
կը պահպանէին : Թէև Յիսուսի ծնունդը
անշուք մտերի մը մէջ տեղի ունեցաւ ,
բայց ուշադրաւ իրողութիւններ ալ չպակ-
սեցան : Ասոնցմէ մէկն էր հրեշտակի մը ե-
րևումը , որուն հետ մէկտեղ « փառք
Տեառն ծագեցին առ նոսա » : « Փառք Տեա-
ռն » բացատրութեամբ կարելի է հասկնալ
լոյսի տարօրինակ փայլ մը՝ որ նոյն իսկ
երկիւղ կ'ազդէ միամիտ հովիւներուն վը-
րայ :

« Փառք ի բարձունս Աստուծոյ » . փառք
Աստուծոյ բարձունքներուն վեջ , ասով կ'աւ-
նարկուի երկնադաւառի հոգեւոր այն ցըն-
ծութիւնը՝ զոր առթած էր Աստուածոր-
դիին ծնունդը և այն լուսապայծառ փառքը՝
որուն ճառագայթները երկիւղախառն հր-
ճուանք մը պատճառած էին հովիւներուն :

« Յերկիր խաղաղութիւն » . հանդարտու-
թիւնը այն սրտերուն՝ որոնք Մեսիայի ա-
կընկալութիւնովը լցուած՝ խնդութիւնով
պիտի ողջունէին աստուածային մանուկի
ծնունդը , ինչպէս նաև փրկագործութիւնը՝
որով մարդկութիւնը իր դարաւոր կա-
պանքներէն պիտի ազատուէր շնորհաց
կեանքի մը խաղաղ միջնորդութիւն մէջ ազատ
շունչ առնելով :

« Ի մարդիկ հաճութիւն » . (բնգր . ծժօ-
xlae = բարի կամք , բարեացակամութիւն) .
մարդոց և Աստուծոյ միջև եղած հաշտ-
ութիւնը կ'աւետէ փրկիչի մարդկութիւնով
որ Աստուծոյ բարեացակամութեան յայ-
տարար մէկ նշանն էր : Մարդիկ մեղքի
միջոցով ընդվզած էին Աստուծոյ պատուէր-
ներուն դէմ և չարին հետ դաշնադիր ե-
ղած , որով և հեռացած Աստուծմէ . բայց
աստուածային զթութիւնը շուտով յայտ-
նուեցաւ Դաւիթի քաղաքին մէջ և հովիւ-
ները առաջինը եղան որ այս աւետաւոր
լուրը տարածայնեցին ամբողջ Բեթլէհէմի
մէջ :

Այսօրուան « փառք ի բարձունս » ը , հր-
եշտակներու բերնէն լսուած այս փառա-
բանական երգին ընդլայնուած ձևն է , զոր

կ'երգենք ամենօրեայ պաշտամունքի մի-
ջոցին աշնքան գէշ և թութակօրէն :

« Եկայք երթիցուք մինչև ցրեթլէհէմ » .
հաւանաբար հովիւները բեթլէհէմացիներ
էին , որոնք աստղագարդ գիշերներ Բեթ-
լէհէմէն քիչ հեռու կը պահպանէին իրենց
հօտը « բացօթեայք » , և անտեղի չէ ենթա-
դրել թէ իրենց անձանօթ չէր և թերևս
նոյն իսկ իրենց բնակարանն էր այն իջև-
ւանը , ուր պատահած էր հրաշալի իրո-
ղութիւնը :

« Տեսցուք զինչ է բանս այս որ եղև ,
զոր Տէր եցոյց մեզ » . բնագրական թարգ-
մանութեամբ . « Տեսցուք զբանս զայս եղ-
եալ , զոր Տէրն ծանոցց մեզ » , կ'ակնարկէ
հովիւներուն եղած աւետիսին թէ « ահաւա-
սիկ աւետարանեմ ձեզ » են . :

« Եւ ծանեան վառն բանին՝ որ աստղաւ
նոցս զմանկանն » . բնգր . թրգմ .
« եւ տեսան ու որոշեցին (= ճանչցան) մա-
նուկի մասին իրենց ըսուած խօսքին համե-
մատ : Հոս խօսքը կը յարաբերէ հրեշտակին
ցոյց տուած « նշանակը » , այսինքն « գը-
տանիցէք մանուկ պատեալ են » :

« Եւ դարձան հովիւքն » , անտարակոյս
իրենց պահպանութեան վայրը :

« Վառն ամենայնի զոր լուան և տեսին ,
որպէս պատմեցաւ նոցա » . բնգր . թրգմ .
« այն ամէն բաներուն համար՝ զորս լրա-
ցին և տեսան իրենց ըսուածին համեմատ » :

ՄԵԼԵՒԶ

ԸՆԴՈՒՆԱԾ ԵՆՔ

Հերդեր եւ իր խղափախան հայեացքները
Ս . Սապահ-Գիւլեանի

« Յիշատակարան » ի Դ . և Ե . պրակները
Վ . Գ . Զարգարեան

Կիսնիի անաթոն վրայ, Ուխտը
Միլքօն Յովսէփեան

ՊԱՏՄԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՍՈՒՄ

ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ ՅԻՍՈՒՄԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՏԵՆ

(Եստուրապիսիս 4րդ թիւեմ)

Ահա այն աղբիւրը, ուսկից Եզրա, Եսայի, Եղեկիէլ և Երեմիա կոչուած այս հսկաները առին իրենց ոյժը: Իրենց քարայրներուն խորը կամ թագաւորներու պալատին մէջ անոնք իսկապէս Յաիտեհականին պահակները եղան և ինչպէս Եզրայի իր վարպետին՝ Եզրայի ըստ, «Ինչպէ՞լի կառքներն ու հեծեալները»: Յաճախ կատարեալ պայծառատեսութեամբ մը անոնք կը գուշակէին թագաւորներու մահը, թագաւորութիւններուն անկումը, Իսրայէլի պատուհասները: Երբեմն ալ կը սխալին: Թէև երկնային ճշմարտութեան արեգակէն վառուած, մարգարէական ջահը երբեմն իրենց ձեռքերուն մէջ կը դանդաճէ ու կը մթազնի աղբային կիրքերու շունչով: Բայց երբեք չեն վարանիր բարոյական ճշմարտութիւններու, Իսրայէլի ճշմարիտ առաքելութեան, մարդկութեան մէջ արդարութեան վերջնական յաղթանակին վերայ: Իբրեւ ճշմարիտ խորհրդագէտներ՝ անոնք կը քարոզեն արտաքին պաշտպանութիւն արհամարհանքը՝ պրիւնտ ողջակէզներու ընտելումը, հոգիին մտքորոգործումն ու գթասիրութիւնը: Միաստուածութեան վերջնական յաղթանակին, բոլոր ժողովուրդներուն համար անոր ազատարար ու խաղաղարար դերին հետ վերաբերութիւն ունեցող իրերու մասին անոնց յայտնատեսութիւնը (vision) հիմնաւրդ է: Ամէնէն ահաւրդաբարութիւնները որ կրնան ազգ մը հարուածել, օտար արշաւանքը, խմբովին վերութիւնը Բաբելոնի՝ չեն կրնար այս հաւատքը խախտել: Մտիկ ըրէք Եսայիին Սենաքերիպի

(Սենեքերիպ) արշաւանքին աստե՛ն, «Ես որ ուրիշները երկնեցի, պիտի չծնցնէի՞ Սիոնը, կ'ըսէ Յաիտեհականը: Ես որ կը ծնցնեմ պիտի արգիլեմ զինքը որ ծնցնէ, կ'ըսէ քու Աստուածդ: Ուրախացէ՛ք Երուսաղէմի հետ և անոր պատճառով ինքեցէք դուք ամէնքդ որ զայն կը սիրէք, դուք ամէնքդ որ կ'ողբալիք անոր վրայ», ուրախացէ՛ք անոր հետ մեծ ցնծութեամբ: Վասնզի այսպէս կ'ըսէ Յաիտեհականը: Ահաւասիկ անոր վրայ կը հոսեցնեմ խաղաղութիւնը գետի մը պէս և ազգերուն փառքը իբրեւ յորդած հեղեղատ մը, և զձեզ պիտի դիեցնեն և իրենց զիրկին վրայ զձեզ պիտի գգունեն: Ես պիտի մըխիթարեմ զձեզ ինչպէս մայր մը կ'սփոթէ իր որդին և դուք պիտի մխիթարուիք Երուսաղէմի մէջ: — Իրենց գործերը և խորհուրդները տեսնելով կուգամ Ժողովրդոր ազգերը և բոլոր լեզուները, անոնք պիտի գան և պիտի տեսնեն իմ փառքս (Եսայի 42. 10—18):

Այսօր միայն և ան ալ Քրիստոսի գերեզմանին առջեւն է որ այլ յայտնատեսութիւնը կ'սկսի իրականանալ, բայց ո՞վ պիտի կրնար այս մարգարէական ճշմարտութիւնը ուրանալ, մարդկային պատմութեան մէջ Իսրայէլի դերը երեւակայնով:

Երուսաղէմի ապագայ փառքին, անոր բարոյական մեծութեան, անոր կրօնական տիեզերականացման հաւատքէն հուազ անդրդուելի չէք նաև մարգարէներուն հաւատքը Փրկիչի մը կամ Մեսիայի մը մասին: Ամէնն ալ անոր վրայ կը խօսին: Անբաղդատելի Եսային է դարձեալ որ ամենէն աւելի յստակօրէն կը տեսնէ զայն, ան է որ իր համարձակ լեզուով աւելի զօրաւոր կերպով կը նկարագրէ զայն. «Յեռնէի բունէն սերունդ մը պիտի ելլէ, անոր արմատներէն չառաւիղ մը չյառաջ պիտի գայ և անոր վրայ պիտի հասնէ Յաիտեհականին Հոգին, Իմաստութեան

ու Հանճարի Հոգին, Խորհուրդի և Չորութեան Հոգին, Գիտութեան և Աստուածավարութեան Հոգին: Արդարութեամբ պիտի դատէ պղտիկները և ուղղամտութեամբ պիտի դատապարտէ պաշտպանելու համար աշխարհի խոնարհները, և պիտի հարուածէ երկիրը գաւազանով և իր բերանով, ու պիտի սատակէ չարերը իր չրթներուն հոգիովը (Յսայի ԺԱ. 1-5):

Այս յայտնատեսութեամբ մարգարէին մօտջ հոգին կը խաղաղի և փոթորկալից երկրինքի մը պէս կը փայլատակէ երկնային տաւիղի մը սարսուռմէն ու բոլոր իր փոթորկումները կ'անհետանան: Վասնզի հիմա Գալիլիացիին իրական պատկերն է՝ որ կը նկարուի իր ներքին աչքին առջև. «Ծաղիկի մը պէս չոր գետնէն ելաւ և անշուք մեծցաւ: անկա յետինն ու արհամարուածն է մարդոցմէ, վշտի տէր մարդ մը: Ան մեր ցաւերը իր վրայ առաւ ու մենք կարծեցինք թէ Աստուծմէ զարնուած էր ան: Բայց ան մեր ոճիրներուն համար վիրաւորուեցաւ ու մեր անիրաւութիւններուն համար հարուածուեցաւ: Մեզի խաղաղութիւն բերող պատուհասը անոր վրայ ինչաւ ու մենք անոր երաշխեպով միայն բժշկուեցանք... Ոչխարի մը պէս սպանդարան տարուեցաւ ու բերանը չքացաւ» (Յսայի ԾԳ. 2-8):

Ութը դարերու միջոցին, ազգային երկպառակութիւններէ և դժբախտութիւններէ վեր՝ մարգարէներուն որոտացող ձայնը Մեսիային գաղափարն ու պատկերը սաւառնեցուց մերթ ահռելի վրէժինդիւրի մը պէս, երբեմն ալ իրրեւ գթութեան հրեշտակ մը: Մեսիական գաղափարը, Բաբելոնի գերութեան մէջ ասուրական բռնակալութեան տակ թխտուած և պարսկական տիրապետութեան տակ բացուած, հետզհետէ մեծցաւ Սելեւկեաններու և Մակաբայեցիներու իշխանութեան տակ: Երբ եկան հռոմէական տիրապետութիւնը և Հերովդէսի թագաւորութիւնը, Մեսիան կ'ապրէր բոլոր գիտակցութիւններուն մէջ: Եթէ մեծ մարգարէները զայն տեսած էին արդարի մը, մարտիրոսի մը, Աստուծոյ ճշմարիտ որդիի մը գիծերուն տակ, ժողովուրդը, հաւատարիմ յուզայական գաղափարին, զայն

կ'երեւակայէր իրր Դաւիթ մը, Սողոմոն մը կամ նոր Մակարէ մը: Բայց, ինչ որ ալ ըլլայ Իսրայէլի փառքին այս վերանորոգիչը, բոլոր աշխարհ անոր կը հաւատար, անոր կ'սպասէր, զայն կը կոչէր:— Այս էր մարգարէական գործին զօրութիւնը:

Այսպէս, ինչպէս հռոմէական պատմութիւնը ճակատագրականօրէն յանգեցաւ Կեսարին, բնադդական ճամբով ու ճակատագրին դժոխային սրամարանութիւնով, այնպէս ալ Իսրայէլի պատմութիւնը կ'առաջնորդուի աղասօրէն դէպի Քրիստոս, գիտակից ճամբով մը և աստուածային սրամարանութեամբը Նախախնամութեան՝ որ յայտնուած էր իր սեռանկի ներկայացուցիչներուն՝ մարգարէներուն մէջ: Չարը ճակատագրապէս դատապարտուած է ինքնիրեն հակասելու և ինքզինքը փճացնելու, քանի որ ան Սուան է. Բայց Բարին, հակառակ բոլոր խոչընդոտներու, յառաջ կը բերէ լոյսը և ներդաշնակութիւնը ժամանակներու կարգին մէջ, վասնզի ճշմարիտին արգասաւորութիւնն է ան:— Հռոմ, իր յաղթանակէն Կեսարականութիւնը միայն ձեռք բերաւ, Իսրայէլ իր խորտակումէն ծնցուց Մեսիան, իրաւունք տալով արդի բանաստեղծի մը սա գեղեցիկ խօսքին, «Յոյսը իր իսկ բեկանումէն կ'ստեղծէ հեռանկատուած իրը»:

Տարտամ սպասում մը կախուած էր ժողովուրդներու վրայ: Իր չարութիւններուն ծայրահեղութեանը մէջ, ամբողջ մարդկութիւնը կը նախազգար վրկիչ մը: Դարերէ ի վեր, գիցաբանութիւնները աստուածային տղայ մը կ'երազէին: Տաճարները խորհրդով կը խօսէին անոր վրայօք, աստղաբանները անոր գալուստը կը հաշուէին, ցնորակոծ սրբիլաներ հեթանոս աստուածներու անկումը պօռացած էին: Խորհրդագէտները ծանուցած էին թէ օր մը աշխարհ իրենցմէ մէկով կամ Աստուծոյ մէկ որդիով պիտի կառավարուէր: Երկիրը կ'սպասէր հոգեւոր թագաւորի մը՝ որ պիտի հասկըցուէր պղտիկներէն, խոնարհներէն, և աղքատներէն: Ելեւսիս քահանաներէն մէկուն տղան, մեծ Եսկիղէսը քիչ մնաց պի-

տի սպանուէր Աթենացիներէն, վասնզի
ան համարձակեցաւ հրապարակաւ բռնել,
իր Պրոմէթէսին բերնով, թէ Արամազդ —
ձաւատագիրին թագաւորութիւնը պիտի
վերջանար: — Չորս տարի յետոյ, Օգոս-
տոսի գահին շուքին տակ քաղցրախօսն
Վիրգիլիոս կը յայտնէ նո զար մը և կ'ե-
րագէ սքանչելի մանուկ մը. «Կիւմէսի
Սիրիլլային կողմէ նախադուշակուած այս
վերջին դարը եկած է, սպառած դարե-
րուն մեծ կարգը կը վերսկսի, արդէն կը
վերադառնայ Կոյսը և անոր հետ Սատու-
նոսի իշխանութիւնը, արդէն երկինքի բար-
ձունքներէն նոր ցեղ մը կ'իջնէ: — Այս
տղան, որուն ծնունդը պիտի վտարէ եր-
կաթէ դարը և ամբողջ աշխարհի մէջ ու-
կեղարը պիտի բերէ, բարեհաճէ՛, զգաստ
Լուսինա, զայն պաշտպանել, արդէն կը
թագաւորէ Ապոլոն՝ քու եղբայրդ: — Տե՛ս
իր շարժած առանցքին շուրջը աշխարհի
տատանիլը. տե՛ս երկիրը, ծովերը իրենց
անհունութեան մէջ, երկինքը և իր խո-
րունկ կամարը ամբողջ բնութիւնը, որ կը
հրճուին ապագայ դարի յայտնվը» (Վիր-
գիլիոս, Հովուերգ. Դ.):

Ուր պիտի ծնի այս մանուկը: Ո՞ր աս-
տուածային աշխարհէն պիտի գայ այդ հո-
գին: Սէրի ինչ փայլակով պիտի իջնէ ան
այս աշխարհի վրայ: Ի՞նչ սքանչելի ամ-
բժութեամբ, ի՞նչ դերմարդկային զօրու-
թիւնով լքուած երկինքը պիտի յիշէ ան:
Ի՞նչ աւելի հսկայական ճիգով պիտի գիտ-
նայ իր երկրային գիտակցութեան խորէն
հոն վերոստնել և իր ետեւէն տանիլ մարդ-
կութիւնը:

Ոչ ոք կրցաւ բռնել զայն, բայց անոր
կ'սպասէին: Մեծն Հերովդէս, եղովմայեցի
յափշտակիչը, Կեսար — Օգոստոսի պաշա-
պանալը, Ներոնի իր Կիրոս գղեակին
մէջ հոգեվարք էր այն ատեն, պերճաշուք
և արիւնտ թագաւորութենէ մը վերջը որ
Հրէաստանը չքեղ սլաւաներով ու մարդ-
կային գերեզմաններով ծածկած էր: Ան
հոգին կը փչէր անուշիկ հիւանդութենէ մը,
տրիւնի ապականութենէ մը, բոլորէն ար-
համարուած, մոլեղնութենէ ու խղճի խայ-
թէն կրճուած, իր անհամար զոհերու ու

բուականներով գրաւուած, որոնց մէջ կը
ցցուէին իր անմեղ կիներ, աղնիւ Մարիանէն՝
Մակարայեցիներու արիւնէն, և իր հարա-
զատ զաւակներէն երեքը: Իր հարէմին
եօթը կիները խոյս տուած էին իր արքա-
յական ուրուականին առջեւէն, որ դեռ
կենդանի՝ կ'զգար արդէն գերեզմանը: Իր
քոյրը Սաղոմէ, իր հար ոգին, ամենա
դաժան ոճիրներուն թելադրիչը, անզգած՝
կը հակէր մահամերձին քովը, ապարօշը
ձակտին վրայ, կուրծքը գոհարեղէններով
փաշիւուն, գոռոզ գիրքի մը մէջ, նէ կը
յրտեսէր թագաւորին վերջին շունչը, իր
կարգին ձեռք առնելու համար իշխանու-
թիւնը:

Այսպէս մեռաւ Հրէաներու վերջին թա-
գաւորը: Այս վայրկեանին իսկ կը ծնէր
մարդկութեան հոգեւոր թագաւորը [1], և
խորայելի հաղուագիւտ խորհրդագէտները
լուծեամբ կը պատրաստէին անոր թա-
գաւորութիւնը, խորին խնարհութեան
մը և անչքութեան մը մէջ:

Ed. Schuré

(Les grand initiés)

Թարգ.
ՀՐԵՆՏ ՄԱՄՈՒԷԼ

Վ Ե Ր Ձ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿ

Բ.

Այժմ կ'արժէ որ պահ մը մեր ուշա-
գրութիւնը դարձնենք ա՛յն ժամանակին
վրայ, զոր պիտակաբար կը գործածենք:
Նկատենք պահ մը թէ փոխանակ մենք
վերաբերելու ժամանակին, ան կը վերա-
բերի մեզ և փոխանակ ան մեր տէրը ըլ-
լալուն, մենք ըլլանք տէրը և սեփակա-
նատէրը: Ուրեմն յաւիտենականութեան
կողմէ արուած ձրի պարգև մըն է ան մե-
զի, որուն շահագործումն և օգտակա-
րութենէն կախում ունի մարդուն բովան-
դակ իմաստութիւնը: Արդ, աւելորդ չէ՞

[1] Հերովդէս մեռաւ մեր քուակալէն չորս տարի
առաջ: Գեներալսներուն հաշիւները համաձայն են
ընդհանրապէս այսօր այս քուակալին վերացելու
Յիսուսի ծնունդը:

մտածելը թէ «իմաստութիւնը կը ճանչնայ իր ժամանակը և իր դատաստանը ըստ այնմ կը կշռէ» . (Ժողովող, Ը . 5) : Եթէ այս աչալուրջ իմաստութիւնը չըլլայ՝ շատ շուտով տրամութիւնն ու թախիծը կը բերէ ժամանակի կորուստին համար , այն ատեն թերեւ իրականանայ Ֆենելոնի սա խօսքը թէ «Ժամանակը տրուած է մեզի որպէսզի յաւիտեանականութեան յարգը գիտնանք , բայց թէ որ չարաչար գործածենք զայն , յաւիտեանականութիւնն ալ կարճ պիտի գայ Ժամանակին կորուստը ողբալու համար» : Ժամանակին յարգը գիտնալէն կախում ունի թէ ի՞նչ կ'արժէ կեանքը , և կեանքին արժէքը ճանչնալ՝ կը նշանակէ թէ արդէն իսկ հասկցած ենք մենք որ զայն արդիւնաւորել պէտք է լաւագոյն եղանակով մը : Կեանքին առնել անցնելէն յետոյ՝ միայն կրնանք հասկնալ թէ ի՞նչ կ'արժէ մեր ձեռքը գտնուած ժամանակը , որ ատեն այլեւս անկարող պիտի ըլլանք զայն վերստին ձեռք ձգելու համար : Հետեւաբար ինչպէս Ֆրանսէին ալ կ'ըսէ «Որպէսզի դուք սիրած ըլլաք կեանքը՝ ժամանակը մի վառնէք , վառնզի ժամանակը այն կըտաւն է որով շինուած է կեանքը» : Բանի մը արժէքը լաւ կերպով ըմբռնելու համար պէտք է անգամ մը զայն ձեռքէ հանել , ամէն կորսուած բան թանկագին է : Ժամանակը թանկագին է դրամէն աւելի և ականակուռ ոսկիէն աւելի մեծարժէք է , որուն կորուստը անդարմանելի է և «անկարկատելի է այն» ինչպէս կ'ըսէ Զեյնոն : Մարդիկ չպիտայ բաներու համար ազահ կ'ըլլան , մինչդեռ ժամանակը կը մտնեն , որպէս թէ անանցանելի է այն իրենց համար : Սենեկա կ'ըսէ թէ «Իւրաքանչիւր օրն ենթադրէ թէ վերջինն է միշտ» : Եթէ այս մտածումով չարժինք , հաւանականաբար պիտի աշխատինք և պիտի հսկենք որպէսզի կեանքը և ժամանակը չկորսուին , չյափշտակուին , չանցնին մեզմէ :

Ժամանակի մասին պէտք է որ ազահ ըլլանք , մեր կեանքի վայրկեաններէն մին նոյն իսկ պէտք չէ որ տանք առանց փոխարժէքը ստանալու , ինայոգութեամբ և արդիւնաւորութեամբ միայն հանենք մեր

ձեռքէն : «Յաւինք միայն ա՛յն ատեն երբ մեր օրերէն մէկը նոյն իսկ կ'անցնի առանց մեր ծանօթութեանց և առաքինութեանց գանձը պարարտացուցած ըլլալու (Լը-Պուր-նէօր) : Այս օրուան դործը բնաւ վաղուան ձգելու չէ՛ , գուցէ վաղը չիգար մեզի՝ համար , և թերեւ տարբեր պայմաններով միայն ողջունենք արեւու ոսկի ճառագայիտները լուսաւոր : Ժողովողային առածը մեծ ճշմարտութիւն մը կը պարունակէ երբ կ'ըսէ «Իրիկուան գործը՝ առտուան մի՛ թողուր» : Ամէն բան իր ժամանակին , ահա լաւագոյն միջոցը յաջողութեան : Նէլսըն կ'ըսէ թէ «Իմ բոլոր յաջողութիւններս կը պարտիմ սա բանին որ ես ամէն գործ իր որոշեալ ժամէն քառորդ մը առաջ կը կատարէի» : Ժամանակը լաւ գործածելու առաջին կանոնն է կանոնի ելլել , և ստուգիւ կանոնի ելլելը մարդուն կուտայ տոողջութիւն , հարստութիւն և իմաստութիւն՝ որոնք աշխարհի ամենէն թանկագին բաները կը նկատուին «մարդուն համար» : Առտուն , կ'ըսէ Շոքէնհաուերը՝ օրուան երիտասարդութիւնն է , այն միջոցին ամէն բան աւելի զով , աւելի ծիծաղկոտ և աւելի զիւրին է , մենք զմեզ աւելի գօրաւոր կ'զգանք , աւելի տրամադիր , մեր կարողութիւնները աւելի բուռն : Այս ժամը կարճել պէտք չէ , ուշ ելլելով , ահարժան զբաղումներով և կամ պարապ խօսակցութիւններով , անիկա կեանքի ծուծն [quintessence] է , իրիկունը՝ ընդհակառակը՝ օրուան ծերութիւնն է» : Կան մարդիկ , որոնց օրերը , տարիները , ժամանակը , կեանքը , շատ երկար կը թուին , այս կը նշանակէ թէ անոնք զբաղիլ չեն գիտեր բնաւ , վառնզի աշխատող մարդուն համար շատ շուտ կ'անցնին և որոնց արագ թռչիլն ալ չզգար , նման այն երկրագործին որ առանց ետեւ նայելու շարունակ կ'աշխատի , կը հերկէ , կը վարէ , և ա՛հա կը տեսնէ թէ քիչ ատենէն ամէն դժուարութիւն հարթուած է , և աշխատութիւնը ի գլուխ ելած է , իրեւ արդիւնք յարատեւ ջանադրութեան : Զիկայ մարդուն համար աւելի սուղ բան մը քան ժամանակը :

Իրականութիւնը ճանչնալ և անոր մասին գիտակցութիւն ունենալ կը նշանակէ՝ երբ գիտնանք թէ ի՞նչ է ժամանակը: «Ժամանակը թերեւս ոտքով կը վազէ մահկանացուներու գլխուն վերեւէն՝ առանց զարթուցանելու զանոնք իրենց երազներէն» (Եռնէկ): Ուրեմն ժամանակին կամ կեանքին անցնելը չզգացողը յաւիտենական անշարժութեան մէջ կը գտնուի, կամ երազի աշխարհներս մէջ կը թափառի մտակորոյս և աննպատակ, ուրիշ երբ կ'արթննայ՝ ընտանաբար ուրիշ բան պիտի չունենայ՝ բայց եթէ պատահանք՝ որուն ընդհուպ կը միանայ ափսոսանքը դառնաղէտ: Թէպէտ կրնանք ըսել թէ այս ափսոսանքը չուսով ցնծութեան կրնայ փոխուիլ, եթէ երբեք ժամանակը իր բարերար ներգործութիւնը ունենայ, վասնորի ան ամէն բան կրնայ փոխել նոյն իսկ մարդուն ամենէն յոռի բնաւորութիւնները: «Երջանիկ փորձառութեան ըփշկին է՝ կ'ըսէ Մալէրպօ՝ ժամանակը, իր դարմանը կ'ուշանայ թէպէտ, բայց ստոյգ է ան»: Ժամանակի դարմանումը անպատճառ տեղի կ'ունենայ, բաւական է որ անոր ցոյց տուած միջոցներէն մարդ գիտնայ օգտուիլ: Միեւնոյն ատեն զանցառութիւն ընողը պատուհաս կը կրէ, ան իր վրէժը կը լուծէ արդար:

Աշխատութիւնը՝ շահագործումն է ժամանակին: Բնութեան մարդուն պարզեւած ամենամեծ բարիքը կեանքն է կամ ժամանակը, իւրաքանչիւրին կարողութեան համեմատ տրուած գոնձ մըն է կամ առաջնորդը, զոր պարտաւորեալ ենք շահագործել մեր անձին և մեզի նմաններուն օգտին համար: Կորսուած ժամերը անգամ մըն ալ չեն դառնար, երիտասարդութիւնը անգամ մըն ալ ձեռք բերելը անկարելի է, ծերութիւն և ոչ մէկը կրնայ մանուկ ըլլալ: Կեանքի ընթացքում կարելին ընելով լաւագոյն գողտփարականին պէտք է հասնիլ: Ժամանակը նոյն իսկ գողտփարականն է մարդուն: Երբ կեանքը օգտակար ըլլայ՝ ժամանակին յարգը և գերազանցութիւնը նրան կ'իլլեն, ժամանակը ինք անգամ կ'աշխատի, պէտք է որ իր աշխատութեան մասնակից ըլլանք: Եթէ մարդկութիւնը

կաղմուղ բոլոր անհասներն ալ լաւ կերպով ըմբռնեն թէ ի՞նչ է ժամանակը կամ կեանքը և ըստ այսմ ապրին, շատ քիչ ատենէն մարդկութիւնը պիտի մտնէ նոր չրջանի մը մէջ, ուր իր բարօրութեան և երջանկութեան արեւը պիտի ծագի մեծապայծառ և շողշողուն: Մարդուն ձեռքը գտնուած ժամանակին բովանդակ նպատակն ըլլալու է միշտ ձգտիլ կատարելութեան, անոր մէն մի վայրկեանները իրենց արժէքը և իրենց վախճանը ունին, Կեանքը իրականութիւն մըն է՝ որուն նպատակն ըլլալու է մարդուն կեանքին դժուարութեանց ջնջումը, մարդուն յոգնութեանց և տառապանքին բարձումը: Յաւիտենականութեան մէջ ժամանակը նոյն է, տեղովութիւնը նոյն է, անփոփոխ ժամանակին ծոցը իր դոյութիւնը պահող մարդուն կեանքն ալ պէտք է նոյն ըլլայ յաւէտ: Այդ նոյնութեան տիրանալու համար, բոլոր մարդիկ միակ նպատակ մը ընտրելու են իրենց՝ որուն հասնիլ ձգտին իրենց բովանդակ կարողութեամբ և ջանադրութեամբ: Այդ նպատակը մարդկութեան կատարելութիւնն ըլլալու է, որուն հասնիլ կարելի է միայն մտաւոր զարգացումով, սրտի բաձրացումով, հոգիի աղնուացումով: Ժամանակի ընթացքին մէջ բոլորութիւնը իր կատարելութեան հասած է, ուրեմն մարդուն ձեռքը գտնուած ժամանակին կատարելիք մեծագոյն դերն է նպաստել անոր կատարելութեան, որ տեղի կ'ունենայ միայն աշխատութեամբ մարդուն կողմէ: Անկէ պիտի բլլսի մեզ մարդոցս համար մեծագոյն բարիքը անսպասելի: Կատարելութեան ժամանումին միայն պիտի համոզուինք թէ՝ ժամանակը տեսած է իր գործը, ու մենք հասկցած ենք թէ ի՞նչ է ան ու ի՞նչ է կեանքը:

ԿՈՐԻԻՆՆ ՎԱՐԳՍԱՊԵՏ

+ 29 Յունուար 1908

ՀԱՅ ԵԿԵՂԵՑ. ԱՌԱՆՊՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷԶ ՄԸ

ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՓԵՏԻ
ՈՂՋԱՄԻՏ ՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

«Որովհետեւ հաւատոյն ճշմարտութիւն միեւնոյն է. չէ պարս յաղաքս solihց բաժաննաւ հախառակել ընդ միմեանս, զի ամենայն ինչ որ ի փառս Աստուծոյ է՝ հաւատարմպես ի նրանեւ ընկալեալք են» :

ԵՐԱՆՈՍ

Հայաստանեայց Եկեղեցին իր նախնինքն սկսած ունի նաեւ սա աւանդութիւնը, ըստ որում Տիրոջ Ծնունդի և Մըկրտութեան տօնը մէկ օրուան մէջ կը կատարենք. և ասի ո՛չ առանց պատճառի, այլ խիստ խորհրդաբար: Վասնզի բոլոր եկեղեցիներն ալ սկզբնաբար ա՛յսպէս կը կատարէին, ինչպէս Ձեր իմաստութիւնը գիտէ (1): Ու թէև ժամանակէ մը վերջ ուրիշ եկեղեցիներու մէջ մէկ տօնը երկուքի բաժնեցին՝ բայց մենք Ս. Գրիգորէն մեզի աւանդուածը անփոփոխ պահեցինք, Ս. Ղուկաս աւետարանիչի վկայութեան համաձայն, որով Ձաքարիայի պապանձելէն յետոյ կը պատմէ թէ՛ «Յետ աւուրցն այնոցիկ գնաց ի սուռն իւր» և թէ՛ «Յըղացաւ Եղիսաբէթ կին նորա»: Եւ Ձաքարիայի քահանայադործութեան օրեր կը կոչէ Քաւութեան հինգօրեայ և Տաղաւարահարաց եօթնօրեայ տօները, որ կ'ընէ տաաներկու օր. հրեշտակին տեսին ու Ձաքարիային պապանձումը տեղի ունեցաւ Քաւութեան տօնին առաջին օրը՝ որ ըստ Եբրայեցւոյ Թշրինի տաւը և Հռոմայեցւոյ Սեպտեմբերի քսանեւեօթն էր, որ ասին դուք պատահած կը նկատէք Եղիսաբէթի յղութիւնը, որպէս թէ (Ձաքարիա) այն օրը՝ ուր Գաբրիէլ հրեշտակապետը աւետիս

տուաւ անոր՝ իր տունը գնաց և յղացաւ անոր կինը Եղիսաբէթ, չսպասելով տօնին կատարումին, ինչպէս կը պատմէ աւետարանիչը թէ՛ «Երբև լցան աւուրք պաշտաման նորա, ապա գնաց ի սուռն իւր», որ երուսաղէմէ հեռու՝ Հրէաստանի լեռնակողմը կը գտնուէր: Ա՛յսպէս Կուսին աւետիսը տեղի ունեցած է կ'ըսէք Մարտ քրտանինգին և ծնունդը Դեկտեմբեր քսանհինգին, տաաներկու օր առաջ:

Իսկ մենք Ղուկաս աւետարանիչի պատմութեան համաձայն Եղիսաբէթի յղութիւնը կը դնենք երկու տօներու տաաներկու օրերու լրումէն յետոյ — զորս Ձաքարիա «աւուրք պաշտաման» կը կոչէ — որ է Թշրինի քսաներկու և հոկտեմբերի երկու: Ու այս հաշուով Կոյս Մարիամի աւետիսը կ'իյնայ ապրիլ վեցին (1) և Ծնունդը Յունվար վեցին: Եւ նոյն օրը՝ յորում ծնաւ, ամսաթիւին և ո՛չ թէ՛ օրուան պատկերին համաձայն՝ Յունվար վեցին երեսուն տարի յետոյ կատարուեցաւ մկրտութիւնը Յորդանանի մէջ. և ասի անսխալ է: Վասնզի եթէ երեսնամեայ էր և ո՛չ աւելի կամ պակաս, ապա ուրեմն Մկրտութեան օրն ալ Ծնունդի օրուան մէջ պէտք է եղած ըլլայ, եթէ երեսուն տարին պէտք է անթերի և աւելորդ մնայ: Իսկ եթէ առաջ ծնունդն էր և տաաներկու օր վերջ մկրտութիւնը, պէտք չէր ըստ թէ՛ «Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից», այլ թէ՛ «Յիսուս երեսունեւմէկ տարին սկսած էր», ինչպէս օրերու անուններուն մէջ կը տեսնուի. վասնզի երբ արեւը կը ծաղի՝ ա՛լ անցած օրուան անունը չենք տար, հապա նորին. ամիսներու և տարիներու հաշիւին մէջն ալ՝ նորը սկսած ատեն առաջին օրը նորին անունով կը կոչուի և ո՛չ թէ հինին: Այս բոլոր ուղիղ և յայտնի պատճառներուն համար է որ առաջին հաշիւը մէկ օրուան մէջ սահմանադրեցին Ծնունդի և Մկրտութեան նորհուրդը, ու մենք ալ անոնց հետեւելով՝ աւանդութիւնը կը կատարենք: Այս ըսածներու հետ մէկտեղ ուրիշ խորհրդաւոր բան մ'ալ կայ. ինչպէս որ մարմնով Ս. Կոյսէն ծնաւ, մկրտութեամբն ալ ծնաւ

(1) Սահմանք հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ գրեալ Ներսիսի կաթողիկոսի Հայոց, ի խնդրոյ աստուածաւոր քաղաւորին Հոռոմոց Մանուէլի»: Ընդհ. բուդք, էջ 120 — 143 թղ. Երուսաղէմ:

(1) Փոխանակ եօթի՝ վեց ունին բոլոր օրմակները:

Յորդանանէն իբրեւ օրինակ մեզ, և որովհետեւ երկուքն ալ ծնունդ են, թէև մէկ մէկէ տարբեր՝ խորհրդով և ժամանակով, ասոր համար առաջին ծնունդին հետ միասին տօնել սահմանուեցաւ նաեւ երրորդ ծնունդը:

Տակաւին շատ պատճառներ կային մեր աւանդութիւնը արգարացնելու և առաջին հայրերու աւանդութիւններուն հետ համաձայն ցուցնելու համար. և թէ՛ ինքնահաճութեամբ մենք չբաժնուեցանք ուրիշ ազգերէն այսպէս տօնելով, այլ ուրիշներ նախապէս մեր սովորութիւնն ու նենալով՝ իրենց ուզածին պէս փոխեցին այն ձևին՝ զոր հիմակ ունին: Իսկ մեր Եկեղեցին առաջիններուն սովորութիւնը անփոփոխ պահեց, աշխարհին հեռաւորութեան պատճառով թէ՛ այն բաժանումին հետևանքով՝ որ առեւտրական ախտը ներածեց, չենք գիտեր: Վասնզի ասերաքիւնը ո՛չ միայն նորաձեւ աւանդութիւններու տեղի չիտար, այլ նաեւ կը ջանայ հին սովորութիւններէն հեռանալ հակառակորդին ասերաքեան պատճառով⁽¹⁾: Իսկ սիրոյն զօրութիւնը ո՛չ միայն պատշաճն ու դիրքին, այլ նաեւ անդիպելու ու դժուարինը յանձն առնելու կուտայ սիրելիին հաճոյքը կատարելու համար: Եւ ինձ կը բռնի թէ այսպիսի իրերու մէջ յանգամանք ո՛չ անոյն թիւն է եւ ո՛չ ալ օրումն պատկերը, այլ միայն հակառակութիւնը: Վասնզի ո՛ր օրն ալ տեղի մարդ առանց հակառակութեան՝ հաճոյ է սատուոյ: Չիկայ աւելի մեծ տեղ մը քան Չասկի խորհուրդը, որու մասին շատ մը եկեղեցիներ նախապէս բաժնուած էին փարսէ, ինչպէս կը պատկերէր Եւսեբիոս Կեսարացի թէ, Ասիացոց կողմէրը հիւնդաքի օրը հին Չասկին հաւանապէս կը տեղեկէր, Յովնաննա աւետարանիչէն ստիճով, իսկ Հռոմէացոց եկեղեցիները միաշարքի՝ մեր Տիրոջ յարաբերան օրը: Ու ինչ մը հակառակելի վերջ՝ դարձեալ խաղաղեցան առաջեղոց հետեւողին Երանոսի միջնորդութիւնովը, վասն զի նա լատին, կ'ըսէ (Եւսեբիոս), երկու կողմերուն թէ՛ «Որովհետեւ հաւաստիքն ճշմարտութիւնը միեւնոյնն է, պիտի չէ տեղափոխել թաժանումին համար իրարու հակառակից, վասնզի անեւ ինչ որ

Աստուծոյ փառքին համար է՝ հաւատարմապէս Անոր կողմէ ընդունելի է»: Ինչպէս որ մարմինի զոյները, սեռութիւն կամ ազգականութիւն, չեն վնասեր մարմինին՝ երբ ան առողջակազմ է, ա՛յսպէս ալ տեղափոխելու եկեղեցիի ուրիշ աւանդութիւններու զանազանութիւնը չվնասէր հոգիներուն անոնց՝ որոնք առողջ հաւատք ունին⁽²⁾:

ԹԻԳՄ.

ՓՈԽԱԴԱՐՁԸ

«... Որում շատ քողոցում՝ շատ սիրեւ, եւ որում սակաւ՝ սակաւ...»

Ղուկ. Է. 36. - վերջ

Թեոքրաստ քոյլ հով մ'իւ մեքին մէջ արդէն Կերեթկար առաջնութեամբ մ'օրոնու.

Ու հաւաստի տալով կրակն իւր տեղն
Հեռի էր դեռ, ինչպէս նախին օրերուն...

Մինչ վերադարձնելու դժբաղդ յանկուցիչ,
Օհ, սիրական հրաշքներն ալ Օծեալին,
Ու խորհրդաւ բարբառն այնքան քաղցր ու ջիւղ,
Մարգարէի հաւատքն Անոր կուտային:

Կեղծիքի մարդն Անոր անկեղծ այդ հոգին
Իբր ա՛յն դիտած էր ու փարիկ կ'ուզէր լուռ,
Ու հաւաստի իւր սիրոյն կ'աթոցէր
Կը կարծէր իսկ հրաւերով մը ներկուռ:

Մեր անոթք մ'է, պատշաճ մը խորհրդաւ,
Խուցկի հոգիի խորհրդին վեհ բարձրութեան,
Ուր անցիւք չը լինիր նիւթ կեղակարծ
Բայց եթէ միայն իբր արտաքին մի նշան:

Երկուամբի խեղճ վարձեցներով, ապա՛հն,
Կ'ալեկոծուէր իւր նոյնիմ միտքն երեւուն.
Ու հաւաստի տալով կրակն իւր տեղն
Հեռի էր դեռ, ինչպէս նախին օրերուն...

Տեսէ՛ք, սա կիցն ինչպէ՛ս յուշիկ՝ դողափութ՝
Կը մօտեցայ շիկնէլի բողն երեսին.
Եւ արցունքի ի՛նչ կայլակներ իւր խոնարհ
Աչքերէն՝ յորդ՝ այսերն ի վար կը հոսին:

Ահ, վեհերոս նայումովն իսկ գողունի
Ու հաւաստի՛ն՝ նեկեկամբին՝ քա՛տափութ՝

(1) Փափաքելի է որ մեր հոգեւորականները ներողանութեան եւ լայնախոհութեան այս սուրբ ոգին մարմնացնեն իրենց մէջ, ազգային աւանդութիւններ պատուար մը չնկատելով եկեղեցիին ընդհանրացումի գործին, որ բխումն էր պատշաճ տեղիցէն: Եւ զոր իրականացնելու պատշաճ տեղէն: Եւ ինչ պատշաճութիւնը կը ծանոթանայ բոլոր օտար եկեղեցիներու պատշաճութեան ալ վրայ, զերծ հրամանակարգային մոլեռանդութիւններէ:

ԹԻԳՄ.

(1) Փափաքել հարուած մը:

Գուցէ բանալ կուզէ լանջիմ գեղանի
Մուշ ու ցաւոս զաղսնիմներուն վարագոյր...

Եւ վարագոյր կը բացուի լիով
Երբոր Փրկչին գոս ակնարկն հրաշագեղ
Ներս ծաւոս բիբերուն մէջ կը հալի
Ջնջելով մեղքն ու մեղքի յոյզը սգեղ:

— Ե՛ք, ո՛հ, Անոր արտաբանութեան,
— Չորս իր գլխու մագերովն իսկ կը պրէ —,
Պաշտօնի ի՛նչ բոք համբոյրներ հրաբուռ
Եւ Գլխուն ի՛նչ օրհնութիւններ առաքիւ...

Սխման սակայն կը գայրակալի: «Աւա՛ղ, գէթ
Թէ մաքաւ մ'ըլլար, կ'ըտէ, արագէտ,
Պիտի գիտնար քէ ո՛րայիսի կին լիցի
Քծիմներով այնքան Խեղ կը մօտի...»

Ու հիմա Խննն է, Մրագէտը, Բարի՛ն,
Որ գրութեան գանձարանէն կը յորդէ
Եւ ընդմէջէն Խ լուսասփիւռ հանճարին
Արցունքին՝ ծայիս, Երկուանքին՝ շող արծաթէ:

«Սիմո՛ն, Սիմո՛ն, կը ձայնէ Ան, սրտաբար,
Մըսայ քու տունը կոչումովս սիրական,
Այլ ոսկերու չը տուիր ջուր մաքրար
Որ, պաշտօնիդ գրականին ըլլար ան:

«Ողջունեցի հայրաբար անձըդ պատիւ
Որ ըլլար ջիւն հաւաստի մը՝ նշանաբան.
Այլ որդեկի համբոյր մ'իմծի չը տուիր
Որ, սիրոյդ սեռն հաւաստիքն ըլլար ան:

«Եւ օրհնեցի սեղանդ նացի նիւրեղէն
Որ Աննիւքին կարօտն ըլլար բաղր այնքան.
Այլ չօծեցիր գլուխըդ իւրով մը քեզէն
Որ նուիրմանը երաշխիքն ըլլար ան:

«Մի՛նչ այս կնոջ արարն անհա՛ն արտաբանիս՝
Մեղքին չափ մեծ է եւ զոյգում՝ գերազանց.
Ձի որուն որ շատ ներուի մեղք, աներկիւղ՝
Կը ներուի ան հոգիովն ու արանց»:

Ես, սակայն, Տէ՛ր, փոխան հացի սեղանին
Անձրս բրի՛ Բեզ ողջակէզ պատարագ.
Այլ Դուն անոր չը հանեցար աշենին
Որ, փրկութիւն մ'ըլլար ինծի այն արագ...

Ես, դառնա՜մ արցունքի՛ տեղ՝ ոսկերուդ՝
Գլխուս արիւնը յորդեցի գէտի պէս.

Այլ դուն չըբիր զայն քաւութեան մը խորհուրդ
Որ, գոհութիւնս յառնէր վեր, դէպի՛ Բեզ...

Շրթնամբոյրի տեղ, ո՛հ, քերելս խաբուծիկ,
Աղիմներէս շատ եղբայրներ Բեզ լացի.
Այլ ունկնդիր չեղար տնանց, Տէ՛ր, յուշիկ,
Որ, դադրէին մոնչիւններն կասողի...

Ես, օծութեան տեղ այն իւղին բուսական
Բեզ պարպեցի սիրտս, արուարը սիրոյս.
Այլ չը բացի՛ր Մրիդ դունակ յայոյս
Որ, քննարկն չը խաբարէր զիս այնքան...

«Ու մտաճառ արիւն արցունքս այդ անյանգ,
Գիտես Դուն, Տէ՛ր, քէ միտս մօտիկ՝ եւ Բեզի՝
Հաւաստ, Յայս, Մեր ծաղիկներու երկներունց
Փունջիս նրբին քերթիկներով արեցի...

Եւ ես Հայն եմ, սարաբաղդ Հայր լուսած,
Որ աւելի՛ զոչաց ուրան չուներ մեղք
Եւ աւելի՛ սիրեց ուրան չը զոչաց:

Այլ անոր այդ զոյգումին ու սիրոյն
Քիչ չափով մ'իսկ չը ներեցիր. եւ, «բող մերկ
Սուրբ եղեմ, ըսիր, ցլեւջ իր գլխուն...»

Եւրոպիա

ԱՐՏԱԽԱԶԳ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՒԱՏՔԻ ՑՈՒՔԵՐ

Աստուած ոչինչէն կ'շինէ իր սրտաբաժ-
նեւոր, որոնց սակայն չըսեր թէ ուրիշ կու-
գան, և ո՛ւր կ'երթան: Անոնք պէտք է որ
քալին անհնդհաւ, ու ինք միայն գիտէ
ճամբան: Ան՝ վայրկեանը կ'երկարեցնէ, և
սակայն բոլորէին մէջ իսկ նպատակը
իրազործուած է: ԿԷՕԹԷ

Աստուած մարդիկը խաւաւի մէջ թա-
ղած, զանոնք անհնդհաւ դեպ ի յոյս կը
գրգռէ. անքակտելի կերպով մարդիկը
գետնին դամած է՝ անշէջ թուիչ մը դնե-
լով անոնց մէջ դէպի բարձրը:

Ան արդէն մտածած է եւ դեռ կը խոր-
հրդածէ, բայց ոչ իբր մարդ, այլ իբր
Աստուած: Իրեն վերապահած է յատուկ,
բացարձակ, անմեղադէտ, մարդուն ան-
հասանելի միտք մը: ԿԷՕԹԷ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն՝ 7-րդ թիւին)

Պատգամ Համարձուժմ Լիմոնճեան Հայկական խաղերը հնարելով՝ ո՛չ թէ միայն վերանորոգիչը, այլ հիմնադիրն եղած Հայ Զայնագրութեան և վասնզի գոնէ ըստ իմ կարծեաց հաւանական չի թուիր թէ Շարականի խաղերով (զորս տարբեր յօդուածի մը նիւթ ընել մտադիր ենք յառաջիկային) կարելի եղած ըլլայ ամբողջ Ստեղծի մը կարգալ նոյն իսկ այդ անհետացած արուեստին տեղեակ եղողներու համար:

Երբ մեծանուն հիմնադիրն իրազործեց ի մանկութենէ անսփ ունեցած այս ջերմ փափաքը, իւր առաջին գործն եղաւ բռն լոր գիծցած եղանակները ձայնագրել և կանոնաւորել. ի՞նչ որ կը լսէր, անմիջապէս կը փութար ի գիր առնելու:

Կը պատմուի թէ օր մը ունկընդրելով այն ատենի նշանաւոր երաժիշտներէն՝ Իսհաք Հրեային (որ մեծ շնորհ գտած էր Սուլթան Մահմուտ Բ. Կայսեր առջև) նոր հեղինակած Պէյաթի բիշրէվը, փափաքեցաւ ձայնագրել զայն. ուստի այդ գիտաւորութեամբ ուղղակի հեղինակին գիմնց, աղաչելով որ հաճի սովորեցնել իրեն. Իսհաք՝ որ բնաւ գաղափար չունէր ձայնագրութեան վրայ, արհամարհական ձեւով մը պատասխանեց թէ՛ իրենց համար չատ դժուար է քիչ ժամանակի մէջ ըմբռնել այդպիսի մեծ Բիշրէվ մը, իւր հինգ երկար «խանէ»ներով, և Աղլըր ու Եիւքիւք Սէմայիներով:

Համարձուժմ կուտիւր մարտեց այս նախաձիւնքը՝ միաքը դնելով սակայն առաջին ատիւ լուծի իր վրէժը. ուստի հետամուտ եղաւ Հրեայ երաժիշտին ծանօթներէն մէկը ձեռք ձգել Բիշրէվ պիտեմէն կը ներկայանայ այս բարեպատեն նախիթը և Համարձուժմ ուզելով օգուտ քաղել առկէ՝ կը գիմէ իր ժամանակակից Ամիրաններէն մէկուն, որ քանիցս հիւրընկալած էր արդէն իր սան մէջ իրանէնաւ Իսհաքը:

Համարձուժմ կը միաբանի Ամիրային հետ՝ անակնկալ մընելու համար Հրեային, և կ'արդեն ինչոյքի մը հրաւիրել զինքը: Որոշեալ օրը կ'այցելէ Իսհաք, և առանց կասկածելու Համարձուժմի ներկայութենէն որ գաղտնի տեղ մը պահուած էր, կ'սկսի նուագել Պէյաթի բիշրէվը և քանիցս կրկնել՝ Ամիրային խնդրանք. այդ միջոցին Լիմոնճեան իւր գործը լրացուցած էր արդէն՝ ամբողջովին ձայնագրած ըլլալով վերոյիշեալ Բիշրէվը իւր կրկին Սէմայիներով:

Ամիրան բան մը պատրուակելով դուր կ'ելլէ պահ մը, և կը տեղեկանայ Հա մա ձուժմի յաջողութեամբ ձայնագրած ըլլալը, ուստի կրկին ներս մտնելով կը հարցնէ Իսհաքին՝ թէ արդեօք մէկու մը դաս պուած է այդ բիշրէվը:

— Եւ ո՛չ մէկուն, կը պատասխանէ Հրեան:

— Սակայն հոս մէկը կայ որ կը պնդէ թէ քեզի չափ տեղեակ է քու հեղինակութեանդ:

Զայս ըսելով կը ներկայացնէ զՀամարձուժմ՝ որ նոյն միջոցին սենեակէն ներս կը մտնէր: Զարմանաւոր կը մնայ Իսհաք, ճանչնալով այն անձը՝ որ արդէն դիմած էր իրեն, բայց վստահ ըլլալով որ նա չէր կարող գիտնալ իր երկասիրութիւնը, կը հրամայէ երգել զայն:

Կը ժպտի մեծանուն երաժիշտը, և հեզնակտն ծիծաղով մը կ'սկսի երգել ամբողջ Բիշրէվը յար և նման իր նուագածին: Իսհաք այլեւս չկարենալով համբերել՝ այնքան չարաչար կերպով վիրաւորուած տեսնելով իր արժանապատուութիւնը, արդար զայրոյթով մը կ'առնէ կը քալէ՝ պոռալով անոր երեսին, «Գողցար արուեստս, Համարձուժմ»:

Այս յաղթանակը տանելէն վերջը, Լիմոնճեան կը դիմէ նաեւ Պէշիքթաշի թէքքէն, լսելու համար հուշակաւոր Տէտէ Իսմայիլը՝ որուն հեղինակած Պէսիքները մեծ յարգ կը վայելին մինչեւ ցայսօր: Տէտէին աչակերաններ կը փութան իմաց տալ վարպետին՝ թէ կրօնական արարողութեանց ատեն դուրսը մէկը կեցած գրի կ'առնէր

իրենց երգած եղանակները : Հետաքրքիր կ'ըլլայ Տէտէ Իսմայիլ . և անմիջապէս հրաման ընելով իւր ներկայութեան կը կանչէ զՀամբարձում ու կ'ստիպէ որ դրածը կարդայ : Լիմօնճեան պարզութեամբ մը կը հանէ գրպանէն քիչ մը առաջուան ձայնագրած Իլահին և ճշգրտութեամբ կը կարդայ ամբողջ պարբերութիւնը՝ զոր ընդօրինակած էր Տէրվիշներու երգած միջոցին :

Տէտէ Իսմայիլ կը հիանայ՝ լսելով այս արուեստին գործած հրաշքները . վասնզի իրա՛ւ է որ իրենք թէև նշանաւոր հեղինակութիւններ կ'ընէին Ուսուլի միջոցաւ , բայց անկարելի էր անմիջական կերպով զրի առնել այդ երկասիրութիւնը . որով մեծ դժուարութեանց կը բաղխէին իրենց աշակերտաց դաս տուած ժամանակ թէ՛ ձայնիւ և թէ՛ նուագարանի միջոցաւ , մինչև որ անոնք կարենային բմբռնել աւանդուած եղանակը . հետեւաբար Տէտէ ա՛յնքան գոհ կը մնայ իւր տեսածէն , որ կը պատուիրէ Համբարձումի՝ ամէն ատեն դալ իր քով և փափաքած եղանակները ձայնագրել :

Կարճատեւ եղաւ մինչև Համբարձումի տարած այս փառաւոր յայթանակը . վասն զի 1819ին Տիւզեանց գերդաստանին պատահած ձախորդութիւնները (Հանդէս ամսօրեայ 1890 , Յ . Հ . Գ . Վրդ Մէնէվիշեան) վերջին հարուածը տուին իւր բազդին , ըստ որում կերպով մը կորսնցուցած եղաւ իր զօրաւոր պաշտպանները՝ որոնք մինչև այդ թուականին թեւ և թիկունք եղած էին ամէն գործառնութեանցը մէջ : Այսկան իր հակառակորդները գլուխ վերցրնել , նախանձիկով անոր ստացած փառքերէն :

Համբարձում չա՛տ աշխատեցաւ որ վերցրնէ այդ հակառակութեան ոգին , ստիպելով զանոնք՝ որ խաղաղ վտարեն յունական այն անախորժ եղանակները՝ որոնք տիրապետած էին մեր եկեղեցեայ մէջ , և իրեն հետ միանալով բարեփոխեն այդ ունգային երգեցողութիւնները . բայց չկրցաւ յաջողիլ , վասնզի այդ հակառակորդաց գլխաւորները՝ Տիրացու Եղիսէ (1770—

1833) , Մինէճի Յովհաննէս (1795—1842) և Գարթալցի Յարութիւն (1779—1859) որոնք կ'ընդլզէին Պապա Համբարձումի դէմ , չը կարենալով տանիլ անոր այդչափ քիչ ատենուան մէջ իր արուեստին միջոցաւ ձեռք բերած յաջողութեան , քանի որ իրենք երկար ատեններէ 'ի վեր մեծ համբաւ կը վայելէին ժողովրդեան բարձրագոյն դասակարգին մէջ՝ շնորհիւ իրենց քաջավարժ շարականագիտութեան . (մանաւանդ Գարթալցի Յարութիւն վարժապետը՝ որ 1828 թուականին Պէզճեան Յարութիւն ամիրայէն պիտի հրաւիրուէր դասախօսելու Մար Եկեղեցւոյ յարակից ուսումնարանին մէջ) :

Այս երեք հակառակորդները՝ որոնք ըսկըսած էին խեթիւ նայիլ Համբարձումի գտած արտասովոր պատուոյն , միանալով իրենց մէջ կ'որոշեն համոզել Ամիրաները՝ և նորա պապականութիւնը մէջ բերելով խաղաղ հեռացնել այդ ասպարէզէն : Եւ որովհետեւ (ինչպէս ըսինք 'ի վերեւ) Համբարձում կորուսած էր իր պաշտպանները , ակամայ ստիպուեցաւ տեղի տալ իր զօրաւոր հակառակորդներուն՝ որոնք կը պնդէին թէ Շարականի խաղերուն շնորհիւ իրենք կարող են ճշտութեամբ կարդալ Ներսէս Շնորհալիէ աւանդուած եղանակները , հետեւաբար պէտք չունին ձայնագրութեան հետեւելու : Ասոնց դէմ դառնութեամբ լցուած՝ շատ անգամ կ'ըսէր միծմնուն երաժիշար . «Սախըն չը կիտնաք քի շարականին թէքմիլ խաղերը մնացեր են , ասոր անձախ քառասունին մէկը մնացած է . աս նօթայով կը կարդացուէր եկեղեցիներուն մէջ մինչև տէրութիւննիս պաթմիլ եղաւ նէ . անկէ ետքը պիւթիւն պիթիւն խայիպ եղաւ . . . փա՛ռք Աստուծոյ , հիմակ մէյտան ելաւ բէք մէնչուրը . ինչու խու կը նային չիյտեմ» :

Այնքան անյիշալար էր Համբարձում իր թշնամեաց նկատմամբ , որ ամբողջ կեանքին մէջ և ո՛չ իսկ ծանր ակնարկութիւն մ'ըրած էր անոնց դէմ : Աւանդակը պատմին թէ օր մը ուղիւ ուրախացնել զԼիմօնճեան , կ'աւետէն անոր ըսելով թէ «գլխաւոր թշնամիդ եղող Տիրաւ-

ցու Եղիսէն մեռաւ» . ախրութեամբ կը պատասխանէ Պապա Համբարձում , «ի՛ս ալ պիտի մեռնիմ օր մը» :

Մեծանուն երաժշտապետ կարեւոր վշտացած իրեն դէմ եղած ապօրէն տարաքննութեան , սկիւմայ հարկադրութեամբ թողուլ պահ մը եկեղեցեաց մէջ դասախօս սկը , և սկսաւ լո՛կ գրագրութեամբ զբաղիլ արքունի ճարտարապետ Պալեան Գրիգոր ամիրայի քով , որուն սիրելի եղած էր իր ունեցած տաղանդին և ժրջան աշխատութեան համար : Բաւական տարիներ մնաց Համբարձում այս պաշտօնին մէջ թէ՛ և մէկ կողմանէ կը շարունակէր յարատեւել իւր արուեստին կատարելագործութեան համար տարած ջանքերը : Ծարտարապետ Ամիրան սիրող մը մ'ըլլալով երաժշտութեան , ներողամիտ աչքով կը նայէր նորա հետեւած գործին և թոյլատու կը գտնուէր Համբարձումի ժամաւաճառութեան : Ան աստիճան կը սիրէր զինքը , որ երբ 1831 ի Բերայի հրդեհէն այրեցաւ եղաւ Լիմոնճեանի տունը , Պալեան փառաւոր բնակարան մը կանգնեց 8 սենեակներով , որպէս զի հանգիստ կաւրենայ բնակիլ բազմարդիւն երաժիշտը հանդերձ իր ընտանեօք , ըստ որում 27 տարեկան հասակին ամուսնացած էր Տուտի անուն աղջկան մը հետ և ունեցած էր 6 զաւակ՝ որոնք կը կոչուէին Մարիամ , Յովհաննէս , Յովսէփ , Զէնոբ՝ մականունաւանալն Նէյզան , Բիւզանդ և Եղիսաբէթ :

Պալեան Գրիգոր ամիրա թերեւս զգալով իւր մօտալուտ մահը , պատեհութիւն ունեցած էր զՀամբարձում ներկայցնել օր մը Պէզճեան Յարութիւն ամիրայի և նորա պաշտպանութիւնը հայցել : Այս բարեպատեհ առթիւ Լիմոնճեան կ'սկսի պատմիլ իւր գիւտը և անոր օգուտները՝ Գազէզ ամիրան որ առ ի չգոյէ ձայնագրագէտ երաժիշտի մը՝ ստիպուած էր մինչ ձայն երաժիշտ դասատու կարգել Յոյն փոսթի Ռոփրիոս Թաթուլայիէ , հետագորգի կ'ըլլայ հասկնալու թէ ինքը կրընայ այդ հեղինակած նօթայովը դաս տալ և Շարականաց երգեցողութիւնն աւանդել

Մայր եկեղեցւոյ երգեցիկ դպրաց , որուն կը պատասխանէ Համբարձում՝ թէ Աստուծոյ շնորհիւն ինքը կարո՛ղ է ամենայն կանոնաւորութեամբ և Ֆէնէրի այդ երաժշտապետէն ա՛լ աւելի յաջողութեամբ դասախօսել ըսն Հայկական ձայնագրութեան վրայ , որոյ միջոցաւ սղայք պիտի կարենան շատ գեղեցիկ կերպով երգել միաբերան՝ իրենց աւանդուած բոլոր դասերը . առա՛նց կարօտ ըլլալու Յունական ձայնագրութեան :

Այս վստահ պատասխանին վրայ մեծազօր Ամիրան այլեւս համոզում գոյացնելով կը հրաժարեցնէ զՌոփրիոս , և անոր տեղ Մայր եկեղեցւոյ դասատու կը կարգէ Պապա Համբարձումը : Այս պարճառաւ թէ՛ և գթաութիւն կը ծագի նախկին աշակերտին ու վարպետին մէջ , բայց Լիմոնճեան առա՛նց հոգ ընելու այս անախորժ միջադէպը , ամենայն յարատեւութեամբ կ'աշխատի իւր ընդհատած գործը յառաջացնել հետզհետէ յաջողակ աշակերտներ հասցընելով մեր Աղգին , (որոց վրայ պիտի խօսինք ըստ կարգի) :

Արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրա Պալեանի մահուամբ (1832) թէ՛ և Համբարձում կորանցուց իւր մեկնասար բայց չը վհատեցաւ . ընդհակառակն օրըստօրէ իւր արտադրած արդիւնքները տեսնելով՝ պաշտպան կանգնած էին Պէզճեան Յարութիւն , Ճէզայիրեան Մկրտիչ և Սախայեան Մարտիրոս ամիրայք . իր հակառակորդ ջոջ դպիրները տեսնելով որ այսքան հզօր պաշտպանութեան ներքե կը գտնուի Համբարձում , այլեւս չէին համարձակիր յայտնի կերպով թշնամական ցոյցեր ընել իրեն , թէ՛ և ո՞ր պահած էին անոր դէմ :

ԱՐԻՍՏԱՆԷՍ ԳԷԼ ԶԻՍԱՐԵԱՆ.

(Շարունակելի)

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

**Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ
ԿԱՄ**

ԱՐԵՆԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (*)

Մէկ նախերգանքով, վեց արարուածով եւ մէկ
վերջաբանով.

Գ Ր Ե Յ

ԳՍՐԵԳՐԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեւանոց)

(Շարունակութիւն Գ. քիւիւն)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԻԼ Բ.

Արսաւեսու եւ Գիւս (Նախարար)

Գիւս

(Յանկարծ ներս մտնելով եւ պալլալով դէմով)

Ա՛հ, ինչո՞ւ Տէրս այսպէս չփոխած վի-
ճակի մէջ կը գտնուի. ի՞նչ ունիք :

Արսաւեսու

(Բռնի ժպիտով մը)

Ոչինչ, Դո՞ւք էիք, Ձեր ձայնն էր հէ,
հո՞րք եկաք :

Գիւս

(Վարանոց)

Ի՞նչ ձայն, Տէր իմ :

Արսաւեսու

Հա՛, այո՛, ո՛չինչ ո՛չինչ, լաւ է որ ե-
կաք. նստէ՛ք :

(Արսաւեսու կը նստի ցայտնաբաց մօտ եւ Գիւս
անոր դիմացը. Արսաւեսու կը շատունակէ իր խօսքը).

Ի՛նչ մը անհանգիստ եմ այսօր, նախա-
րար, շատ զոհ պիտի մնամ Ձեր այցելու-
թեանէն :

Գիւս

Ի՞նչ ունիք, Տէր արքայ :

(*) Ամէն իրաւունք հեղինակին վերապահուած է :

Արսաւեսու

Ո՛չինչ, սովորական տեսութիւն մը. այս
գիշեր խիստ մտազգաղ եւ անքուն վիճակ
մ'ունեցայ : Չափազանց յոգնեցուցիչ աշ-
խատութիւններ եւ մտածումներ ունիմ նա-
խարար :

Գիւս

Այդ հասկանալի է. Տէրը կարողութիւն
պարզեւէ :

Արսաւեսու

Շնորհակալ եմ :

(Պան մը լուիէ վերջ)

Նոր լուր մը տո՛ւք :

Գիւս

Ո՛ւսկից :

Արսաւեսու

Տիգրանէն : Լսեցի թէ Տիգրանի եւ Բիւ-
զանդիոնի յարաբերութիւնները դարձեալ
ձգտեր են : Իրա՞ւ է. բան մը լսեցի՞ք այս
մասին :

Գիւս

Ո՛հ, նոր բան մը չեմ լսած. բայց հաւա-
նական է որ խաղաղութիւնը երկարատե-
ւեցայ երկու պետութիւններուն միջև : Գի-
տե՞ք թէ Հռովմայեցիներուն համար շատ
նպաստաւոր չէր 915 (=2915) դաշինքը՝
զոր Պարսիկները յանձն պիտի չառնէին
նոյն իսկ, եթէ Հիւսիսականներէն երկիւղ
չունենային : Ամէն պարագայի մէջ Բիւ-
զանդիոն եւ Տիգրան իրարու թշնամի են,
բայց առ այժմ երկուքն ալ իրենց շահերն
ունին հաշտարար քաղաքականութեան մը
հետեւին ունի մէջ : Եւ չեմ կարծեր, Տէր
արքայ, որ բարեկամական այդ յարաբե-
րութիւնները, կեղծիքով մշակուած, այս
օրերուն խղով, ինչպէս Դո՛ւք լսեք էք :
Դէ՞թ պաշտօնապէս բան մը խմայուած չէ :

Արսաւեսու

Շատ հաւանական ալ չէ, վաճառի հիւ-
սիսական ցեղերու եւ Բաղարիոյ մէջ դարձ-
եալ խլրտուէմներ սկսած են :

Գիւժ

Բայց չէ՞ք գիտեր թէ Թէոփոս կորովի մէկը չէ : Բիւզանդիոն անոր օրով չեմ կարծեր որ կարենայ պարսկապետս որ և է չարժու՞մ փորձել . Տիգրան կրնայ ապահով ըլլալ այդ մասին :

Արսաւես

Ասով մէկտեղ այս ըսել չէ թէ չկասկածիր :

Գիւժ

Միենոյն որսին վրայ ճանկ երկարող երկու գաղաններ չեն կրնար իրարու հաշտ աչքով նայիլ : Կառավարութիւններու քաղաքականութեան հիմն է կասկածը , և Պարսից ու Հռովմայեցեաց , և մա'նուանող առաջիններուն կասկածը չեշտող և արթուն պահող պատճառներէն մէկն է մեր աշխարհը՝ որ յաւիտենական կռուածադիրը եղած է այս երկու թշնամի զօրութիւններուն :

Արսաւես

Ասի շատ ճշմարիտ է : Հայաստանը աչքի փուշ է , անոր գոյութիւնը խոչընդոտ մէ Արեւելքի կամ Արեւմուտքի աշխարհակալ արշաւանքներուն : Եւ Դուք վստահ եղէ՞ք Վահեռունայ Տէր , թէ Տիգրան՝ Շապուհէն վերջն իսկ՝ կը փութար վերահաստատել իր սկսած քաղաքականութիւնը , Հայաստանը կը վերածէր պարսկական նահանգի մը , եթէ մէկ կողմէն Բիւզանդիոնի խրտուխլակը , միւս կողմէն Քուշանաց և Հոնաց շարունակական և անզուսպ ապստամբութիւնները , և այն ամէնուն մէջ նախարարական տարանջատ այլ պաշտպանողական դիրքը և Պարսիկներու յաւակնութիւնները չքաշաւերող ձեռնպահութիւնը՝ չհարկադրուէին Վռամը , երեք տարուան ամուլ փորձէ մը վերջ , քարեփոխել կամ յետաձգել հայաստանի մասին կազմուած ծրագիրը . ծրագիր՝ որուն գործադրութեանը ձեռնարկած էր , ա'յնքան յանդգնօրէն , Յազկերտ : Այսպէս չէ՞ :

Գիւժ

Այդ անուրանալի է , կարելի չէ ուրիշ կերպ խորհիլ :

Արսաւես

Պէտք է ընդունիլ , նախարար , թէ Արշակունիներու գահը հօրս մահէն վերջն իսկ վստահուեցաւ : Ծերունի հօրեղբորս դարձը չնորհք մը կամ բարեմտութիւն մը չէր : Յազկերտ չա'տ լաւ գիտեր թէ Անյուշ բերդի այդ քայքայուած աքսորականը երկար պիտի չկրնար կրել իր վերասացած թագը և այդ կարճատև ժամանակամիջոցին մէջ ինքը պիտի յաջողէր ի գլուխ հանելու իր ծրագիրը :

Գիւժ

Ա'յդ ալ ճիշտ է :

Արսաւես

Ու երեակայեցէ՞ք թէ իրերու վիճակը ա'յսպէս ըլլալէ վերջ՝ զի'ս կ'ամբաստանեն իբրեւ հայրենիքի աւերը պատրաստող դաւաճան : Նախարարները՝ ինչ բացառութեամբ՝ Պարսից արքունիքէն աւելի չարամիտ են : Հաշտ աչքով չեն նայիր Արշակունի տան և կ'ուզեն ջնջել միապետութիւնը : Անոնց այս սրամտութիւնը հաւանաբար շօշափած ըլլալով արքայից Արքան՝ ընականաբար պիտի քաջալերէ զայն :

Հայաստանի ոյժը նախարարական դասակարգին մէջ ցրուած է . զայն կազմուածելու միակ միջոցն է այդ դասակարգը անջատել , բաժանեալ ոյժերու վերածել և սուտ ու չլացողիչ խոտուումներով անջատաբար զանոնք առնել պարսկական լուծին տակ և տէր ըլլալ Հայաստանին : Ու մեր նախարարները աւելի անձնական փառասիրութեամբ կուրացած քան թէ հայրենիքի փառքի նախանձախնդրութեամբ ոգևորուած , ոչինչ կ'ուզեն կամ կը ձեռնին հասկնալ պարսկական այս դիւական դիւանագիտութիւնէն :

Լսեցիք անշուշտ , նախարար , որ զիս մատնել կ'ուզեն Վռամի ձեռքը , իբր թէ անոր համար որ . . . գիտէ՞ք ինչո՞ւ համար . . .

Գիւժ

Մասնե՛լ , և ինչո՞ւ . . .

Արսաւես

Կեղծաւորներ . . . Իբր թէ տարփածու

մը եղած և հակաժրիստոնէական կեանք
մը ապրած ըլլալու համար :

ԳԻԼՏ

(Վարսնոն)

Ձեմ կարծեր , Տէր արքայ :

Արսաւէս

Եւ սակայն ասի իրականութիւն մ'է :
Ձարմանալին այն է միայն որ տեսէք թէ
ո՛րպիսինքն կողմէ և ո՛րու առջև կ'ամ-
բաստանուիմ : Թող բազդատեն Վասմի
ապրած կեանքի իմինիս հետ : Կնամոյ ,
հաճոյսէր , որսի չափազանց սիրահար այդ
պարսիկ իշխանայրին , իսկապէս որ մէկ ար-
ժանիք չունի իբրև Իրանի վեհապետ : Ար-
գէն չէ՞ որ իր գահն ալ կը պարտի այն ա-
ւագանիներուն և քուրմերուն , որոնց քը-
մահաճոյքին գերին եղած է պարզապէս
ինք : Իսկ Արտաշէսի յանցանքը . . . թեր-
ևս այն՝ որուն համար ինծմէ աւելի ան-
շուշտ պիտի դատապարտուէին բոլոր զիս
ամբաստանողները :

Է՛հ , երիտասարդ մը ասկէ աւելի զրը-
կանք չկրնար ընել իր անձին : Ալ եղածը
եղած է , գիտցածին թող ընեն :

ԳԻԼՏ

Բայց գիտէ՛ք , Տէր արքայ , թէ այսպի-
սի պարագաներու մէջ քիչ մը աւելի չըր-
ջահայեաց և արթուն ըլլալու է : Ինչո՞ւ
պարսպ տեղը խճրճանքի առիթ տալ :

Արսաւէս

Թագաւոր մը առանձին ի՞նչ կրնայ ընել
նախարար :

ԳԻԼՏ

Բայց Դուք առանձին չէք . անկեղծ ու
փորձաւոր խորհրդականներ չեն պակսիր
Ձեր մօտ :

Արսաւէս

Ձոր օրինակ :

ԳԻԼՏ

Ձոր օրինակ՝ պատուական Հայրապետ ,
անձնուէր սպարապետ , քաջ ու ծերունի
ասպետ . մէկ խօսքով գրեթէ ամբողջ ե-
կեղեցականութիւնը և նախարարական դա-

սէն շատեր՝ որոնց մէջ կրնաք հաշուել
նաև զիս :

Արսաւէս

Հը՛մ , Հայրապետ , այո՛ . նա թերևս
միակ և ջերմ բարեացակամն ու պաշտ-
պանն է ինձ և Թագիս . բայց վերջապէս
եկեղեցական մ'է նա : Իրերը միշտ կրօնա-
կան տեսակէտէ կը դիտէ ու կը դատէ , և
բարոյականի իր չափազանց բժականդրու-
թիւնը կը շինէ իր մէջ այն՝ տեսակ մը
խտաբարոյ նկարագիրը՝ որով նա զիս
յանդիմանելու չափ յառաջ կերթայ երբեմն .
և ասի՝ այնպիսի յանցանքներու համար՝
որոնք ճրի զրպարտութիւններ են կամ կո-
չումիս և հանրային գործերու վնաս բերող
որ և է հանգամանք չունին :

Բայց , կը հասկնամ վերջապէս թէ աշ-
խարհէ քաշուած ծերունի եկեղեցական մը ,
այնքան նախանձախնդիր իր Եկեղեցիին ,
զոր կարելի է նկատել բարոյամոլութեան
աղբիւր , տարբեր պիտի չկրնար խորհիլ :
Վարդան հայրենասէր մը և եկեղեցասէր
մ'է միանգամայն , իր պապու խնորովը
զանգուած . ունի չափազանց խղճահարա-
կան և հոգեպաշտիկ նկարագիր մը : Առանց
կրօնքի չըմբռնել հայրենիք . ամէն ինչ հայ-
րենիքի համար , այս՝ է իր սկզբունքը ,
փչելով ամէն ինչ որ անձնականութիւն կը
չեղտէ , այս է իր պահանջքը : Այս գաղա-
փարներուն հետ չի տակը ես չեմ կրնար
հաշտուիլ : Իսկ Սմբատ , գերեզմանին մօ-
տեցած այդ ծերուկը , հայրապետին համա-
խոհներէն է . չա՛տ կը խօսի , խի՛ստ շատ :
Հակառակ իր յառաջացած տարիքին՝ եր-
բեմն առիւծի նման կը սրտոտի , մանա-
ւանդ իր այն ամէնէն սիրական հեռա-
պատկերին առջև՝ որ Վասակի անձին հետ
կապ ունի . . .

Ախ , Վասակ ըսի՝ ու դարձեալ խոսկեց
միտքս Սիւնեաց աշխարհի այդ . . .

(Ոսֆի կ'ելլէ զայրացած , նոյնպէս եւ ԳԻԼՏ շուա-
րած) .

Ի՞նչ կը լսէք անոր մասին :

ԳԻԼՏ

(Տեսնումս)

Վասակի՞ , Սիւնեաց Տիրոջ :

Արսաւէս

Այո՛ , այդ . . .

ՔԱՐՈՋԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Բ.

«Անուհա Էր հոյր մի, որում
անուն Էր Մարիամ, որ Է
Էկն նստաւ առ ոսակ Տեառն
Էւ լսէր զբանս նորա»:

(ՂԱՌԿ. Ժ. 39)

Բերանիոյ ընտանիք մեծապէս սիրելի եղած էր Էւ արօժեալ էր հիւր ընդունելու յանախ մեր Տէրք:

Անոնք ամենք (երկու հոյրերն Էւ եղբայրն) գնահատեցին այդ առանձնաւոր հումար բայց Մարիամ իմաստութեամբ օգտուեցաւ անկէ:

Մարթա կ'ջանար ծառայել Տիրոջ որչափ որ կրնար.

Մարիամ Յիսուսի սիրով լցուած էր, ինչպէս կ'գիտնանք զինքն օժեղէն, որով Էւ կուգէր ծառայած ըլլալ՝ անոր՝ որչափ որ կրնար:

Այսպէս քաւ նա՝ մտադրութիւն դարձնելով անոր խօսքերուն:

Նա իմաստուն Էւ սուրբ կին մըն էր, Էւ մեր Տէրք գովեց ծառայութեան համար անոր ընտրած մեթոտը:

Ապահովապէս ուրեմն պիտի կրնանք, անոր օրինակին հետեւիլ:

Սորվինք այն կնոջմէն՝ որ նստաւ ուսանողի մը պէս մեր Տիրոջ ոտներուն տակ, Էւ սորվեցուց մեզի ընտել «բարի մասը»:

Հոս կ'սեսնենք—

Ա. ՍԷՐ ՀԱՆԳԻՍՏ.— «որ Էւ Էկն նստաւ առ ոսակ Տեառն»:

Նրբ երեկոյ կ'ըլլայ, Էւ ընտանիքին բոլոր անդամները վստահանին շուրջը կ'հաւաքուին, այն ատեն սէրը կ'հանգչի Էւ կ'հաղորդակցի, մոռցած ամեն հոգիք տանք մէջ երջանիկ, մոռցած նաեւ արտաքին աշխարհը, Էւ նոյն իսկ ժամանակը:

Նման Մարիամին—

Պէտք է որ ինկզբինիս հանգիստ զգանք մեր Տէր Յիսուսի հետ:

Պէտք է զերծ ըլլալ աշխարհային հոգիքէն —մեր Տիրոջ բողոքով ամեն բան:

Պէտք է նոյն իսկ ազատ ըլլալ որչափ ծառայելու հոգէն, յանուն անոր քաղաքականութեան ըլլուելիք մաքաւումները Էւ մեզի յանձնուած հոգիներու խնամք տանելու բեռնէն:

Պէտք է հաղորդութեամբ վայելել մեզի համար հայրապետած այն երջանիկ հանգիստը, ինչպէս նաեւ խորհիս ա'յնքան՝ հանգստաւէ հրահանգներուն վրայ, զորոնք այնչափ պայծառ կերպով յայտնի կրնէ, Էւ այնքան իրական կրնձայէ:

Իր գործը մեզի համար որ աւարտած, ընդունուած տեւականօրէն արդիւնաւոր Էւ մեզնջեցնապէս ծառայ կ'զսնէ անգին օրհնութիւններով:

Իր մեծ պարգեւները զորս ընդունած ենք Էւ որոնք գալիքներէն շատ աւելի մեծ են:

Շնորհաց բոլոր այն անհրաժեշտ Էւ խոստացուած օրհնութիւնները որոնք ապահովաբար պիտի գան ի դէպ ժամանակի. Հռովմ. Ը. 32:

Մեր ամբողջ ապագան, քե' այս աշխարհի Էւ քե' յաւիտեանականութեան համար ապահովուած է անոր սիրելի ձեռներուն մէջ:

Ուրեմն՝ աներկիւղ Յիսուսի հետ հանգիստ ժամանակ վայելնք.— հանգիստ ժամանակ, բայց ոչ ծուլութեան. հանգիստ ժամանակ սիրելու. ուսանելու, հաղորդակից ըլլալու, նմանելու:

Հանգիստ ժամանակ՝ տան մը մէջ ուր ուրիշներ կ'զբաղին (տե՛ս համար 40-42)

Հանգիստ ժամանակ նստելու, Էւ նստելու՝ ամենէն հանդադոյն տեղին վրայ:

Բ. ՍԷՐ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ. — «առ ոսն
Յիսուսի»:

Իւրաքանչիւր ո՛ր այս խոնարհութեամբ
բող անձնապէս նմանի Մարիամին.
Եւ ըսէ ինքն իրեն. «Ինձի տեղ ընտրած եմ
Յիսուսի ոտներուն տակ».

Թող ըլլամ —

Ոչ քէ զբաղեալ սան Տիկին մը, ինչպէս
որ կրնայ ըլլալ ո եւ է մէկը, եւ տա-
կաւին շնորհագուրդ մնալ, ալ բող
ըլլամ —

1⁰ Ապաշխարող մը, որով իմ անարժա-
նութիւնս պիտի նանչնամ.

2⁰ Աւակներս մը, որով զհիսուսիւնս պիտի
խոստովանիմ.

3⁰ Ընդունող մը որով սնամեջութիւնս
պիտի յանձն առնում.

Այս վիճակը կ'յարմարի ինձի՝ երբ կ'խոր-
հիմ քէ ինչ էի, ինչ եմ, ինչ պիտի ըլլամ,
ինչ է իմ տեսքս եւ ինչ է նա ինձ համար:

Օրհնեմ ուրեմն անոր ցածուն սէրը որ
կուտայ ինձ այս երանութիւնը:

Գ. ՍԷՐ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ. — «Եւ լսե-
ր զբանս նորա»:

Նա պիտի չկրնար լսել եթէ պարապոյ
ժամանակ չունենար նստելու. ո՛չ ալ՝ եթէ
խոնարհ չըլլար, եւ չընդունիր նստիլ անոր
ոտներուն տակ:

Թող մեր բաժինն ըլլայ լսել սիրոյ այն
խօսքը որ կրսէ. «Իմ տ' դուստր եւ տ'ս»
(Մաղմ. ԽԴ. 10)

Ունկնդրե՛լ ինչ որ Յիսուս կրսէ խօսովը,
իր արարչութեանը, իր նախախնամութեանը
եւ իր Ս. Հոգիովը մեր հոգիին մէջ:

Ունկնդրե՛լ այն ձայնին եւ շեշին՝ որով
նա կ'ոգեւորէ եւ կ'աղցրացնէ ամեն ինչ
որ կ'խօսի:

Ունկնդրե՛լ իրեն. ուսումնասիրելով զինքը,
կարդալ անոր սիրքը.

Ունկնդրե՛լ առանց կարեւորութիւն մը
սալու մեր գաղափարներուն ծանօթութեանց,
հարցերուն՝ բաղձանքներուն եւ նախապա-
շարունակներուն:

Ունկնդրե՛լ մտնալով ուրիշներու դիտ-
ողութիւնները եւ անհաւատութիւնները:

Ունկնդրե՛լ, բոլոր այն հագերը լուեցնելով

որ ալ չկարենան խանգարել սրտին պատ-
կանելի լուրիւնը:

Ի՞նչ անոյ՞ է այս. ի՞նչ հրահանգիչ, եւ
որչա՞նք նշանաւորապէս «մասն բարի»:

Դ. ՍԷՐ ՍՏԱՅՈՒԱԾ.

Նա ստացած էր իր Տէրը, անոր սէրը,
անոր ներկայութիւնը, անոր խօսքը, անոր
ընկերակցութիւնը եւ ստացած էր ի կա-
տարեալ վայելչ ուրախացնելու համար
իր հոգին անով՝ որուն այնքան զուարթու-
թեամբ հանդիպած էր:

Նա մէկ բանով մը միայն իր հոգիին
պէտքը կ'լեցներ, ուստի եւ նստած էր կա-
տարեալ գոհունակութեամբ:

Նա ուներ Տիրոջ խոստումը քէ այդ բա-
ժինն իրմէ պիտի չբարձուէր, եւ կատարե-
ալ վստահութեամբ նստած էր, այդ
ստացումովը երջանիկ ըլլալու համար:

Իր Տիրոջ խոստումը ապահովցուց զինքը
քէ պիտիչկ ընցներ այն բարի մասը, զոր
ընտրած էր ինքը —

Ո՛չ ի քրոջ դժկամակ դիտողութեամբը

Ոչ ապագայ վշտով, կամ փորձու-
թեամբ, կամ զբաղումով:

Եւ ո՛չ իսկ մահուամբ:

Արդ երբ նա կ'մնայ հաստատման ո-
րոշումով, նա հասած է իր վերջնոր-
ոշուման, եւ ալ պիտի չերթայ իր Տիրոջ
եւ անոր խօսքէն անդին:

Ո՛հ, աւելի մնալ Յիսուսի հետ: Այս է
նշանաւոր կեանքը.

Ո՛հ, աւելի ունկնդրել Յիսուսի: Այս է
նշանաւոր ծառայութիւնը.

Ո՛հ, աւելի սիրել Յիսուսը: Այս է նշանա-
ւոր գանձը.

Ո՛հ, Յիսուսի հետ մնալ միշտ, եւ երբեք
չխորհիլ հեռանալ անկէ: Այս է նշանաւոր
խմաստութիւնը:

(Սպր. չորս)

Թարգմ. Անգլիերէնէ

ՂԵՒՈՆԴ ԵՎ Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԴԶ. ԷՐԱՆԻՐՃԵԱՆ

ՎԱՐԻՉ. —

ՂԵՒՈՆԴ ԵՎ Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ. — ԴԱՐԵԳԻՆ, ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան Դորձակցական Ընկերութեան

Պապը Այի նաստէսի Սէփեքիլէր փողոց Թիւ 27

Մարսիիա
Մօսկուա
Նիկոմիդիա
Նիւ-Եօրթ
Նոր Զուղա
Շ. Գարահիսար
Ուշափ
Պանսրմա-Պալթեքեր
Պաղսաս
Պաճրա
Պարսիակ
Պե. բուք
Պուֆրե
Պուսա
Ռուսնուփ
Ռօսօքօ
Սամսօն
Սեբասիա
Սելանիկ
Սիվրիսար
Սօֆիա
Տարսանկ
Տեսե աղան
Տիարպեփր
Տրապիզոն
Տփղիս
Վառնա
Փարիզ
Քեօքանիս
Քեօքեմնե
Քղի
Ֆիլիպի
Ֆրեզնօ

Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշէ Բնյ. Գալչինեան
Տ. Պօպօնեան Բնյ.
Տ. Ոսկի Բնյ. Պիպինեան
Տօքթ. Թիրեաքեան Խան
Առաջն. Փոխանորդ Տ. Բագարաա Վրդ. Վարդազարեան
Դառնիկ էֆ. Պէյլէրեան
Կարապետ էֆ. Քենեանեան
Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մազլումեան
« Տ. Մովսէս Ս. Եպիսկ. Կէօմրիւքեան
Աւետիս էֆ. Բէրթմէնեան
Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիէլ Վրդ.
Ղազարոս էֆ. Կոնիկեան
Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի
Տ. Մկրտիչ Բնյ. Մըջիկեան
Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Բնյ. Թաքմէնեան
Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտապաշեան
« Տ. Թորգոմ Ծ. Վրդ. Դուշակեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Սերովլէ Բնյ. Ներշապուհ
Տ. Յովհաննէս քնյ. Բըջրեան
Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
Տ. Դիոնիսիոս քնյ. Տրէզեան
Դարեգին Բնյ. Տէօվլէթեան
Առաջնորդ Տ. Զաւէն Վրդ. Տ. Եղիսեան
« Տ. Էմմանուէլ Վրդ. Պալեան
Հ. Առաքելեան
Աւետիս էֆ. Զարպանէլեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Վռամշապուհ Բնյ. Քիպարեան
Առաջն. Փոխանորդ Տ. Մեսրոպ Բնյ. Տէօքմէնեան
Տ. Մատթէոս քնյ. Մանիկեան
Առաջն. Տեղապահ Տ. Պասկ Վրդ.
Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
Ազն. Յակոբ էֆ. Նչկեան

Պալատ մէջ թերթիս վաճառման կեդրոնատեղին է՝

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Պապը Ալի Գասսէսի, Սեփեքիլիք փողոց, Թիւ 27, եւ Ֆինանսներու Եօզուու, Պագրերը՝ Արմենակ Եազընեան եւ Ընկ. գրասունք, իսկ Բերայի մէջ, Մեծ-Փողոց, Սելանիսի դէմ ծխավաճառ Գ. Կիլիկեանի խանութը:

ԽՄԱԲԱԳՐԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմքեարեան
- 2⁰ Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
- 3⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
- 4⁰ Տ. Դարեգին Վրդ. Խաչատուրեան
(Խմբագրապետ)
- 5⁰ Տ. Պարզե Վրդ. Դանիէլեան
- 6⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
- 7⁰ Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
- 8⁰ Տ. Զարմայր Բնյ. Կէղիւրեան
(Ոգ. Խմբագրապետ)

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
(Վարիչ)
- 2⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
(Արտոնագրատ)
- 3⁰ Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
- 4⁰ Տ. Սուքիաս Բնյ. Պալթեմեան
(Վաճառապետ)
- 5⁰ Տ. Պօղոս Բնյ. Պէյաղճեան
(Արտոնագրատ)
- 6⁰ Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
(Արտոնագրատ)
- 7⁰ Տ. Դէորդ Բնյ. Անանեան
- 8⁰ Տ. Դրիգոր Բնյ. Ճէպէճեան

«ՏԱՃԱՐ»-Ի
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրս
Գաւառաց » »	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Զեռէ կը ծախուի պրակը	50 փարայ

«Տաճար»-ի վերաբերեալ վարչական գործերու համար պէժք է դիմել
ՂԱՆԻՐԵԴ Խ. Վ. ԴՈՒՐԵԱՆ-Ի

Իսկ խմբագրական գործերու համար պէժք է դիմել խմբագրապետ
ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ-Ի

ارمنيجه «داجار» غزتهسى اداره خانهسى

باب على جادهسى ابوالسعود زوقاغى نومرو ۲۷

Rédaction de la Revue «DADJAR».

27, Ru Sépétdjiler, Av. de la S. Porte, Constantinople. (Turquie).

Խմբագրութիւն «ՏԱՃԱՐ» Կրօնա-եկեղեցական կրթամասեայ հանդէսի
Պապը Ալի ճատտէսի Սէփէթճիլէր փողոց թիւ 27

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՐՍԵՆԱԿ ԴԱՀԱՆԱՅ ԷԴՄԻՐՃԵԱՆ